ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ։

ԹԻՒ Ը։ — ՇՐՋԱՆ Ը։ **1875** ՏԱՐԻ Ը։ — ՕԳՈՍՏՈՍ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՈՂՒ ԵՒ ԳԱՂՏԻԱՐՈՒԹԻՒՆ։

Ա՛յս միջոցներուս՝ եւ ի կողմանս ինչ՝ մի քանի՝ թէեւ շատ անշան թուով՝ անձինքներէ՝ կղերական ոգի և կղերական դասակարգ-ը-ի՝ անուամբ մի նոր գաղափար կրտսածուի, որոյ դէմ եթէ մի քանի եւ թեթեւ ակնարկութեամբք ներհակախօսներ երբեմն կելնեն, սակայն իբր արձագանգ կոյր զկուրայն պաշտպանութեան դեր կատարողներ եւս սակաւ չեն։

Ո՛չ սակաւ դարմանալի՝ միանգամայն վշտաւելի է այսպիսի մի գաղափար տեսնել այնպիսի Ազգի եւ եկեղեցւոյ անդամոց մէջ՝ որոց պատկանած Ազգի եւ եկեղեցւոյ դէրքը եւ վիճակն, եթէ չասեմ խոպառ, գոնէ ըստ բազում մասանց, կարի մեծ տարբերութիւն եւ ինքնուրոյն ուղղութիւն՝ տարբեր պայման եւ շահեր ունի։ Մանաւանդ պէտք է նկատել նա եւ՝ զի քաղաքական — անկախ կազմութիւն՝ եւ համարիւն՝ համասեռ եւ համանուն (մի եւ նոյն անունը կրող) մի Ազգի մէջ՝ կրօնական մեծ բաժանմունք, եւ կամ կրերա-հակառակ թէ եկեղեցական եւ թէ քաղաքական տարբեր տարբեր իշխանութիւններ կամ վարչութիւնք չունենալով՝ կղերական կամ քաղաքական ուղղութիւններ եւ գաղափարներ՝ եւ ըստ այսմ պաշտօնական գերի խանութեան կամ նախամեծար ազդեցութեան նախանձախնդրութեամբ միմեանց դէմ զինուող եւ խիզախող մարմիններ մէջ տեղ ոչ թէ միայն չեն երեւիր, այլ եւ չեն նշմարուիր անգամ, հետեւաբար ո՛չ հարկ եւ ո՛չ տեղ կայ մինը կամ միւսը պաշտպանելոյ կամ պահպանելոյ համար վերկութեան եւ ապահովութեան այսպիսի մի միջոց հնարելոյ։

Արդարեւ ճիշդ այսպիսի վիճակի մէջ գտնուող Հայոց Ազգի եւ եկեղեցւոյ մէջ կարելի է հարկ անհրաժեշտ տեսնել եւ մտածել այնպիսի մի դրութիւն՝ ինչ որ այսօր լիուլին իրականացած կայ Գերմանացւոց՝ ինչպէս նաեւ մի քանի

հզօր եւ քաղաքական անկախ դիրք եւ իշխանութիւն ունեցող ուրիշ աղգաց մէջ, որք պարտաւորուած են իւրեանց ապահովութեան համար՝ այսպիսի եւ աւելի մեծագոյն ձեռք առնել։

Պապականութիւնն չէ՞ այն աշխարհատարած կրօնական ստուար մարմինն՝ որ աւելի կլուծայ, եւ շատ աղգաց մէջ պապական եկեղեցւոյ հաւատացեալներ եւ ժողովուրդ շահած լինելով՝ բայց մի եւ նոյն ժամանակ ամենուրեք եւ անդադար հակադրային գաղափարներ կառաջէ եւ կ՚ըմբռնայ, որ՝ ամեն տպերքի՝ մի կրօնական — ամենաուած պետական բանութեամբ եւ երեւակայական գերիշխանութեամբ չդուխմէական եկեղեցւոյ մէջ ի մի ձուլէ եւ կեդրոնացնէ, ուստի սորա դէմ եւս վայրաուորնէն եւ կը պինդուին այն ամեն աղգեր եւ պետութիւններ՝ որք պապականութեան լարած եւ տպատնացած վտանգին ներքեւ կը գտնուին եւ կտագնապին։

Գերմանացիները եւ Իտալացիները օրինակ բերել բաւական է։

Գերմանական աղգն՝ թէ եւ մի քանի քաղաքական ինքնուրոյն եւ անկախ համադգի իշխանաց կառավարութեամբ պետութիւններ ունենալէ զատ՝ դաշնակցական — կեդրոնական գերիշխանութեան մեծ կայսրութիւնը կը կրէ, եւ ըստ կրօնականին եւս գրեթէ երկուքի բաժանուած է, եւ կրօնական — պաշտօնական երկու մարմին ունի՝ որք միմեանց դէմ եւս անհաշտելի ախոյեան եւ ոխերիմ թշնամիներ են։ Պապականութեան եւ լուսերականութեան համար պէտք է խմանալ։

Պապականութիւնն իւր ընդարձակ եւ հնադարեայ յաւակնութեամբք Գերմանացւոց մէջ վաստակած եւ ունեցած հաւատացեալ ժողովրդովն բազմաց քաջայայտ եղած ջանքերը ի գործ կը դնէ Գերմանականն աղգութեան՝ ինչպէս նաեւ լուսերականութեան դէմ. իսկ Գերմանական կեդր. պետութիւնն ըստ մեծի մասին՝ ինչպէս նաեւ Գերմանական աղգութեան եւանգուն ըղգացմամբք ոգեւորեալ եւ նորին գոյութեան եւ ապահովութեան համար ամենայերիմ նախանձախնդիր վառուած անդամներն՝ տեսնելով պապականութեան լարած որոգայթները եւ հին ժամանակներէ հետէ ,,քաթանէա պ պէրէոյեա,, աշխարհավարութեամբ տրուած հարուածները, մանաւանդ քաղաքական — պաշտօնական մարմինք եւս ըստ մեծի մասին՝ կամ թէ կեդրոնական վարչութեան իշխանաւորներն եւ ղեկավարներն լուսերական կրօնը պաշտելով՝ փոխադարձաբար բուռն կրիւք զինուած են եւ բազմատեսակ սպառազինութեամբք կը շահատակին պապականութեան դէմ։

Մի եւ նոյն պապականութիւնն է՝ որ Իտալացւոց աղգը եւ պետական անձինքը իւր դաւանակցութեան եւ եկեղեցւոյ անդամք եւ որդիք ունենալով, եւ յիշեալ աղգի մէջ մի կրօնական տարբեր կամ ուրիշ մարմին եւս չգտնուելով՝ սակայն Պապական աղգային ոգին եւ վսեմ նպատակին դէմ զինուելոյն եւ չարաչար գործելոյն համար՝ դարձեալ Իտալական աղգի եռանգուն եւ բարենախանձ անդամներէն՝ բանագէտ

ժողովուրդէն եւ սեռական անձինքէն՝ միանգամայն քաղաքական իշխանութենէն կհալածուի։

Պապականութիւնն՝ համարիւն՝ համասեռ եւ համազգի չեղող իւրաքանչիւր ազգայ մէջ՝ հակաքրիստոնէական նպատակներով՝ օտար եւ քաղաքական գերիշխանական գաղափարներով մոլուած եւ յափշտակուած է, եւ կջանայ ամեն ազգայնութիւնքը ոչնչացնել իւրաքանչիւր ազգայ ազգային — քաղաքական գոյութիւնքը եւս վնանգելով կամ խնդալ ջնջելով։ Սակայն այնպիսի գաղափարներ առածելն մանաւանդ այսօրհետեւ աննեղելի լինելով՝ հեռեւաբար ամենայն ազգ եւ իշխանութիւն՝ քայ խռամիկներէն՝ խստաղինուած են եւ կդիմեն պապականութեան դէմ՝ եւ կարի իրաւամբք որպէս զի իւրեանց ազգային միութիւնքը ապահովեն՝ ամբողջացնեն եւ զօրացնեն, եւ իւրեանց ազգի գոյութեան եւ ապահովութեան երաշխաւորներ եւս կրկանգնեն ազգային եւ կրօնական խնդրութիւններ դնելով։ ազգայինը քաղաքականով ամրացած եւ հզօր սպառնութիւն գտած կլսահանջէ որ՝ ազգի կրթութիւնը եւ դաստիարակութիւնը ինքն հոգայ ազգային դաստիարակութեամբ, իսկ օրէ ՚ի բերէն եղող եւ շատ ազգաց մէջ տարածուած պապականութեան եւս կներէ եւ իրաւունք կտայ՝ իւր հաւատացեալ ժողովրդեան կրօնական եւ եկեղեցական պիտոյից համար միայն եկեղեցական պաշտօնեաներ պատրաստել, նա եւ ժողովրդեան իւր հաւատը եւ կրօնը ուսուցանելոյ արտօնութիւնը կտայ յիշեալ պապականութեան։

Սակայն պապականութիւնն այսքանով չէ կարող գոհ լինել եւ չբաւականանար, եւ իւր քաղմակոմբ արբանեակներով չարանենթ մեքենայութիւններ կհնարէ յիշեալ ազգայ՝ ինչպէս նա եւ այլոց դէմ, եւ երբէք չպիտի դադարի՝ մինչեւ որ նոքա խոպան արկարանայ եւ կործանի, եւ կամ իւր նպատակին հասնի։ Զայս քանզ գիտնալով եւ հասկանալով ազգային ոգւով՝ ազգային միութեան եռանդով՝ եւ ազգային գոյութեան եւ անկախութեան նախանձախնդիր թէ ժողովուրդքն եւ ամեն անձնանուէրներն եւ թէ իշխանութիւնքն՝ ոչ միայն օր աւուր խորութիւններ կյայտնեն, կնահմանադրեն եւ միշտ կքարոզեն, այլ եւ պապականութեան կրօնական (այս ինքն կղերական) ոգւոյ և պաշտպանելոյ վերայ անդադար եւ աստիճութեամբ կը յարձակուին, գաղտնիքները կքննեն, բուն նպատակները կհրապարակեն՝ կը դատափետեն, կհարուածեն եւ կհալածեն՝ մինչեւ որ ժողովուրդը արթնանին՝ ղղուեցնեն եւ ղգուշացնեն, միանգամայն եթէ հնար լինի՝ խստաւ հեռացնելով։ Զմոռանալով կրկին ասելոյ՝ զի պապականութիւնն եւս փոխադարձաբար զինուած է իւր հակառակորդ ազգայ դէմ եւ անխնայ ամեն միջոց ի գործ կդնէ եւ երբէք աշխատութիւն եւ չանք չխնայեր իւր հակառակորդը յաղթահարելոյ եւ չքաւելոյ համար՝ թէ եւ ի զուր է ինչ որ անէ, եւ երբէք իւր բուն նպատակին հասնելոյ հարող չպիտի լինի։

Արդ շատ հեշտ է այս ամենը եւ այլ այսպիսիքը բաղդատելով տեսնել եւ համոզուիլ՝ թէ պապականութեան՝ Գերմանական եւ Իտալական ազգայնըլման դիրքը եւ վիճակ ունի՝ Հայոց ազգն եւ Եկեղեցին եւս՝ որ մի եւ նոյն Ազգի մէջ կրօնական եւ ազգային այլ եւ այլ խըտրուիւններ տածելոյ առիթ տայ եւ անհրաժեշտ կարեւորուիւն լինի։

Քանի՜ վիհ մեծ է եւ ոչքան անհամեմատելի տարբերուիւնք կան ինչպէս պապականութեան հետ՝ պապականութեան տիրած ազգաց՝ եւ նոցա ազգային շահուց՝ նոյնպէս Հայոց Ազգի եւ եկեղեցւոյ մէջ։

Ինչպէս որ Գերմանացւոց եւ Իտալացւոց ազգաց մէջ հակակշիռ եւ հակազգային մի կրօնական բուռն մարմին կայ եւ միշտ կը գտնուի, նոյնպէս կայ Հայոց եւ Հայաստանեայց եկեղեցւոյ սեպհական կրօնական պաշտօնական մարմնոյն մէջ կարելի՜ է ենթադրել՝ դի ինչ որ պապականութիւնն Գերմանացւոց եւ Իտալացւոց մէջ հակազգայնութեան ոգւով կենսւթէ եւ կորամադրէ ազգութիւնը տապալել եւ ջնջել ջանալով եւ զամենայն ինչ միայն պապականութեան մէջ կեդրոնացնել՝ նկրտելով եւ երեւակայելով՝ նոյնպէս կ՚ըլլան Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտօնեայք՝ այս ինքն Հայոց կրօնական պաշտօնական մարմինն ընդդէմ Հայոց ազգային մարմնոյ՝ զայն օտար մի շաւղի ենթարկելով եւ իմի տարբեր եւ օտար մարմին ձուլել մղելով։

Ինչ որ պապականութիւնն կմտածէ եւ կենսւթէ Գերմանական եւ Իտալական ազգային միութեան եւ ազգային ոգւոյ եւ շահուց դէմ, կարելի՜ եւ ներելի՜ է մտածել անգամ՝ դի ըստ այնմ կխորհի եւ կենսւթէ Հայոց ազգի եւ եկեղեցւոյ կրօնական մարմինն՝ իւր համարիւն՝ հնամատեան՝ հայկազեան հարազատ անդամոց եւ եղբարցն ընդդէմ։ Երբ պապականութեան, Գերմանական եւ Իտալական ազգութեանց շահերն խիստ մեծ տարբերուիւնք եւ իրերահակառակ եւ ի միմեանց անկախ հզօր պայմաններ եւ նպատակներ ունին եւ ըստ այնմ իւրաքանչիւրն գուն կգործէ եւ գիշեր եւ ցերեկ կը տքնի, միթէ նոյնպէ՞ս է նաեւ Հայոց Ազգի աշխարհական եւ եկեղեցական անդամոց դիրքը՝ վիճակը՝ շահը եւ նպատակը։ Ո՞վ է Հայն եւ ո՞վ է Հայկական Ս. Եկեղեցւոյ եւ Կրօնի պաշտօնեայն։

Ի՞նչ է Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնական մարմնոյ կամ պաշտօնէից գլխաւոր եւ նուիրական ջանքն եւ նպատակն, եթէ ոչ պաշտպանել եւ յարատեւ ապահովել Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանած Քրիստոնէական կրօնը, եւ Հայութիւնը կամ Հայ ազգութիւնը։ Ի՞նչ է Հայաստանեայց ազգի անդամոց կամ աշխարհական որդւոց նուիրական եւ գլխաւոր ջանքն եւ նպատակն, — եթէ ոչ՝ զարձեալ մի եւ նոյնը՝ այս ինքն պաշտպանել եւ յարատեւ ապահովել Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանած եւ պաշտած Քրիստոնէական կրօնը եւ Հայութիւնը կամ Հայ ազգութիւնը։

Ուրեմն ի՞նչ հարկ կայ այսպիսի վիճակ ունեցող համասերունդ՝ համարիւն եւ համազգի եղբարց մէջ կղերական կամ

ոչ — կղերական դրութիւն եւ խըտրութիւն տեսնելոյ՝ եւ կամ սերմանելոյ, եւ քանի՛ որ այսպիսի գրութեան մէջ կգտնուի՝ Հայոց համար ի՛նչ նշանակութիւն ունի ի Հայս կղերական ոգի և պառպակալնի՛ն նկատելն։

Ողջամիտ տեսութեամբ՝ կղերականի իսկական նշանակութիւնը ո՛ր տեսակ նըկատմունքով եւս քննեմք, նորա ներքեւ Հայոց համար վտանգաւոր ոչինչ քան ծպտուած չէ եւ երբէք չէ կարող լինել՝ քանի՛ որ Կղերականը համարիւն՝ համասեռ եւ համազգային հարազատ անդամ եւ որդի է, միանգամայն նոյն Ազգի եւ եկեղեցւոյ մէջ մի եւ նոյն հարազատ ոգւով զարգացած եւ դաստիարակուած է։ Նա օտար պաշտպանութեան եւ յարկի ներքեւ երբ զարգացած՝ եւ պղտոր եւ խարդախ աղբիւրներէ ուսումն առած չէ եւ ոչ խմորուած, ուզէ կղերական լինի՝ ուզէ աշխարհական լինի, ո՛ր վիճակի մէջ եւս գտանուի՝ նա անձնանուէր է Հայոց Ազգի եւ եկեղեցւոյ, եւ նոցա համար կզոհէ ինքն զինքն։ Եթէ աշխարհական մնայ, բաւական է որ յաւէտ Հայկական հարազատ ոգւով եւ դաստիարակութեամբ զարգացած լինի, դարձեալ նա կաշխատի եւ անձնանուէր է մի եւ նոյն նպատակի եւ ջանից համար։

Վերցո՛ւր Կղերական անունը եւ դի՛ր եկեղեցական կամ հոգեւոր, քանի՛ որ ուծացեալ՝ այս ինքն Մայրենի եկեղեցիէն եւ ազգային մարմնոյ ամբողջութենէն հերձեալ չէ, դարձեալ Հայոց՝ ինչպէս նաեւ Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտած կրօնի համար մի եւ նոյն ջանքը եւ նպատակը կըկրէ եւ կտածէ։

Ապաքէն այլ եւս ի՞նչ կերպով կարելի է եւ պիտի համկանամք կղերական ոգի և պառպակալնի՛ն*)։ Կրօնքը ուսանելոյ կամ չուսանելոյ նպատակ, կամ թէ համեմատաբար աւելի կրօնից վերաբերեալ առարկաներով զարգանալ եւ դաստիարակուիլ՝ կենցաղօգուտ գիտելիքներէն եւ լեզուներէն միանգամայն ազգաւ թողլով։

Կրօնքը ուսանիլ ամեն մարդու առաջին եւ նուիրական պարտաւորութիւններէն գերագոյնն է։ Հետեւաբար՝ որքան միջոցներ կներեն եւ անհրաժեշտ կլինի՝ ըստ հանգամանաց ժամանակի եւ պահանջման եկեղեցւոյ՝ ամեն մարդ կսիրէ եւ պարտաւոր եւս է կրօնից վերաբերեալ ջատ առարկաներ կամ միջակ եւ կամ աւելի ընդարձակ կերպով ուսանել եւ իմաստասիրել։ Իսկ գալով կենցաղօգուտ գիտելիքներ եւ լեզուներ աւելի կամ նուազ քանակութեամբ ուսանելոյ, որքան որ ըստ ներելոյն նիւթական միջոցաց ժողովրդեան եւ դպրոցաց՝ այս ինչ կամ այն ինչ տեղ կըգտնուի եւ կարելի կլինի՝ Հայոց թէ եկեղեցական եւ թէ աշխարհական անդամոց ամեն տեղ զուգընթաց ջանքը միշտ եղած է Հայոց որդւոց Հոգեւոր սիւտոյից հետ՝ մարմնաւորին եւս կարե-

(*) Դաստիարակութեան խնդրոյ մէջ դաստուերեան եղանակի և տարբերից քանակութեան և տեսակին նկատմամբ՝ տե՛ս Ալանի և Գոբծնական — էջ՝ Ալանի երկու գաղափար և վիճաբանութիւն կը տիրէ ի լուսաւորեալ և ի զարգացած աշխարհս, իրր երբորդ անկեան և գաղափար, պէտք է յաւելուլ կղերական ոգի և պառպակալնի՛նը։

ւոր եղածները խիտասին եւ անհրաժեշտ կերպով մատակարարել, ըստ այսմ՝ նոքա իւրեանց պարտաւորութեանց համաձայն՝ միմեանց պակասելով՝ կենցաղոգուտ գիտելիքներ եւ լեզուներ պարտադիր չանիւք ուսուցանել տուած են Հայկազն մանկտւոյն, որոյ ապագայցներ այսօր ամեն տեղ ակնյայտնի պարզ կըտեսնուին՝ ինչպէս որ միշտ եւս տեսնուած են։

Արդ ցայս վայր յայտնուած տեսութիւն եւ դիտողութիւններէն ըստ բաւականին հասկացուեցաւ որ՝ Հայոց համար կղերական Վ.ՏԱՆՏԱՒՈՐ ոչ՛ և պատրիարք-ին երեւակայելոյ ոչ հարկ կայ եւ ոչ առիթ. բաւական է որ մեր դպրոցներ՝ օտար ազգեցութիւններէն եւ օտարագործիք անձանց միջամտութիւններէն աղատ մնան, իսկ այս կամ այն անունը կրելը՝ միեւնոյն՝ համարիւն՝ համասեռ եւ համազգի հպատպ անդամոց մէջ խորութիւն ձգելոյ չափ ազգեցութիւն եւ նշանակութիւն ունենալ չէ կարող. բայց միանգամայն տեսնելով ի ներկայս մեր Ազգի ենթակայ եղած վիճակը եւ շրջապատող զանազան վերահաս ծանր հանգամանքները՝ որով ամենք կընկրտին Հայութեան ամուր նեցուկը եւ պաշտպանը եղող Կրօնը խախտել եւ Հայութիւնը վտանգի ենթարկել՝ միմիայն Կրօնը չնչուելով՝ այլ եւս Հայութեան ուրիշ բան չմնար՝ բայց եթէ օտար-քաղաքականացեալ մի ազգի հետ ի մի ձուլուիլ, որովհետեւ քաղաքական անկախ դիրք չունենալով՝ եւ Կրօնական կապը խզուելով՝ Հայութիւնը կրմնայ անտէր եւ անպաշտպան՝ կամ ընդ իրը անգոյ-ի մերձին, որով ուղէ չուզէ՝ օտարութեան պիտի հետեւի եւ լինիլն անհետանայ։ Եւ ահա այս ազատնալոյ դրոյ եւ վտանգի առաջքը առնելոյ համար՝ այժմ՝ ինչպէս եւ միշտ պէտք է մեծ ճիգ թափել եւ խնամք տանել անշուշտ ասեն մարդու Կրօն ուսուցանելոյ իւր կարեւոր պարագաներով հանդերձ, եւ այս հարկ անհրաժեշտ է ոչ միայն ճշմարիտ եւ ջերմեռանդ Աստուածպաշտութիւն ուսուցանելոյ եւ հոգեկեցոյց եւ կատարեալ մարդկութեան բարերարող առաքինասիրութեան եւ բարեգործութեանց ջերմ զգացմունքներ տարածել եւ արդիւնաւորելոյ համար, այլ եւ Հայոց Եկեղեցին եւ Հայութիւնը տուաւել եւս ապահովելոյ եւ պաշտպանելոյ համար, զոր Հայոց ամեն սեռի՝ ասոնցմանէ եւ կարգի անդամք եւս համամտութեամբ կըպաշտան եւ յաւէտ կըմնան։ Իսկ հակառակը կմտածեն նոքա՝ որք Հայ չեն՝ եւ Հայասատանեայց Կրօնը խախտելով՝ Հայութիւնը եւս ջնջել կնկրտին, ուստի երբ Հայոց ողջամիտ ազգայնոց եւ բանիմայ եկեղեցական պաշտօնէից Աբօնէց ած-ը զբօ-ընեամբ և պաշտպան-ընեամբ զՀայութիւն գպրոցներէ սկսեալ ամեն տեղ՝ նոյն ոգւով եւ զգացմամբ վարել եւ զարգացնելը կտեսնեն, անմիջապէս կպարտաւորուին Աղբեական ոչ և ի պատրիարք-ին գոչելով պահանջել եւ ըն ըն քմահաճոյ բացատրութիւնները տալով, որոց իրաւունք կըտրուէր՝ եթէ Հայասատանեայց եկեղեցւոյ պաշտօնական մարմինն սի եւ նոյն նպատակով, զոր օրինակ՝ Գերմանացւոց մէջ ներգործեր,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԱԲԶԱՑ, ՈՒՐՈՅՇՈՂԱՑ, ՀԵՐՁՈՒԱԶՈՂԱՑ ՆԻ ՐԱԺԱՆԵԼՈՑ ՑԵԿՆԴԵՅՈՑՆ ՀԱՑՈՑ.

(Շարունակութիւն):

30Դ. ԻԱ.

Յունուար ապրիլեան հալածող Հայոց՝ պատ. 25:

(Ամք Տեառն 908): Ննեւէտանէրորդ ամ էր թագաւորութեան Մմբատայ Ա. Բագրատունեաց, որում Հոգոյ աշխարհի Բագրատունեաց, յորում ժամանակի քեռորդի նորա Գագիկ Արծրունի՝ յազգս Հայկունի ժառանգութեան Վասպուրականի քաղաքի՝ ապստամբեալ ի նմանէ՝ գնայ Աբարպատական բազում ընծայիւք առ ոստիկանն յուսուփ, որում հարկս հարկանէր աշխարհս Հայոց յանուն ամիրապետին՝ և թագաւորեալ ի նմանէ ի վերայ տանն Արծրունեաց՝ կարի գժտեցոյց զոստիկանն ընդ դեմ Սմբատայ արքայի, որով և աղմուկ և խռովութիւն յաշխարհին մեծ յոյժ: Ընդ որ զահի հարեալ արքայի և նախարարաց միաբան եղեալք ընդ նմա՝ իբրև առաքեն ի հաշտութիւն ընդ ոստիկանին զՅովհաննէս Սաթուղիկոս բազում և մեծագին ընծայիւք՝ ևս և յուխտ խաղաղութեան, նա ընկալեալ պատուով ի վերին երեսս Հայրապետին՝ կապէ ապա ի բանտ խաւարին՝ իբրև զգազանաձան ոք՝ սպառնացեալ՝ տալ նմա զկարիս բազում: Նա ինքն ընդ մերումն հակառակաթոռ արքային Գագկայ և եղբօր նորա Գուրգենայ՝ որ հազարապետն էր արքայի Սմբատայ ի վերայ Հայոց աշխարհին՝ զօր մեծ դումարատակ արարեալ՝ դայ ընդ

որ ի հարկէ նոցա ազգութեան եւ ազգային շահուց ներհակ սիտի գար՝ ուսուի եւ անշուշտ սիտի պարտաւորուէին Հայաստանեայց եկեղեցւոյ անձնանուէրը պաշտօնէից եւ անդամոց գէմ սպառազինուելով ամեն կերպով մաքառելոյ:

Արդ ի հնէք բանիս դժուար չէ եզրակացնել նաեւ որ Հայոց մէջ Կղերական ոգի և պատրիարքական երեւակայելն՝ կամ գիտիպէս օտարաց արձագանք լինել կընշանակէ, եւ կամ այնպիսի գաղափար ուածել եւ տալածելն ատանց օգտ և գոյութեան նպատակ չէ, ուստի ոչ որ լինի եւ լինչ տեսակ տեսութիւն նէս բացատրել նկրտի, նորա կջանայ Հայոց մէջ վտանգաւոր Կղերական ոգի և պատրիարքական երեւակայելոյ եւ խորութիւնն արհամարհելոյ հնարք եւ հակառակը խօսելով՝ եթէ լինի եւս ոչ կարող է հաստատել եւ տպացուցանել՝ զի Հայոց կղերական ոգին կամ եկեղեցականք կջանան Հայութիւնը տանալալելոյ՝ մինչդեռ այժմ Պօղոս (կամ Կղերականութիւնը) հարուածել անգամ չնայն՝ ի լոք եւ անշուշտ զՀայութիւն եւ Հայաստանեայց Եկեղեցին կործանելոյ կարասցնորգէ, զոր ոչ կարող է ժխտել՝ եթէ ողջամտութեամբ եւ քաջ գիտէ Հայութեան եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ ներկայ վիճակը եւ անհրաժեշտ պէտքը և պաշտպանը:

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՆԿՈՒՆԻ.

դարնանամուտն՝ ի Նախիջևան քաղաք՝ խաղալ անտի ի վերայ աշխարհին Սմբատայ. ուր աճէ ընդ ինքեան և զկապակեալն Հայրապետ՝ զՊատմագիրն Յովհաննէս Օ.րդ. անդ կոչեալ առ ինքն ոսկիականին՝ զԳագիկ և զՈւրդին հանդերձ զօրօք իւրեանց, զզօրսն արձակել՝ մնին զառաջինն յաշխարհն Սիւնեաց։

Այլ որ անդէն Գրիգոր Սուփան նախարար Սիւնի որդի Գաբուռն Վասակայ՝ քեռորդի արքային՝ հանդերձ եղբարբք ժողովեալ զզօրս՝ զանցս մտից՝ ձանապարհաց կալեալ ունելով՝ սրոյ ձարակ տան զքաղաքն ի զօրացն Յունիայ. այլ վասն զի այցելութիւն Տեառն անտես արարեալն էր զնոսա ըստ Յովհան. պատմաբանին, վասն անմիաբան լինելոյ նոցա ընդ թագաւորին իւրեանց, չկարելով և ևս զդէմ ունիլ անպատակացն՝ անկանէին յամուրս քարանձաւաց. և նոցա յարձակեալ ի սահմանն նոցին՝ կոխան արարին զաշխարհն Սիւնեաց. և զորս միանգամ արձակէր քաղաքաց դառնէին՝ էր զոր կատարեցին, և էր՝ զորս ի գերութիւն վարեցին (909)՝ յաւուրս տօնի մեծի Օ.ատկին։

(Ընդ Տեառն 910)։ Օ.կնի այսորիկ իրրև լինէր ոսոխականն ի Դուին՝ առ իւրեանել խարէութեամբ զԱմբատ՝ էառ հարկս ի նմանէ՝ դահեկանս վաթսուն հազար. և առ ժամանն մղեալ զզօրս ի Շիրակ գաւառ, փախուցանէր զարքայ հետամուտ զօրօք մինչև ի ձորս Կղարջաց գաւառին Յաշխարհն Գուգարաց, և յարձակեալ ի քաղաքս իշխանութեան նորա՝ կոխեաց և մանրեաց զորս եղիտ արտաքոյ և յաւէր դարձուցանէր զաշխարհն. և զամառն ողջոյն շրջեալ ի կողմն լինէր Հայաստանի, յաւերել և ի քանդել գիւղս և զաւանս, դառնայ ի Դուին։ Եւ անդ իրրև պակասէր ուռձիկ զօրուն, սկսաւ այնուհետև կեղնքել զնախարարսն ընդ իւր եղեալս, որպէս և զԳագիկ և զՅովհաննէս Կամթուղիկոս՝ զոր առ իւր ի բանտի ունէր, զորմէ և ինքն գրէ *). և ի պահանջել ոստիկանին ի Հայաստանէն գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ժամ դիպող գըտեալ ինքեան՝ խնդրեաց զազատութիւն առ ի ժողովել և բերել առ նա զդրամս. արձակեաւ ի բանտէ և ոչ ի կապանաց՝ ժողվէ ըստ կարի զարծաթ և առաքէ առ ոստիկանն. որով և գտեալ ապահովութիւն՝ վախստեայ անկաւ յՂազուանս առ մեծ իշխանն Սահակ և առ թագաւորն Ղազուանից Ատրներսէհ։ Նոյն ինքն ոստիկան՝ որ առ իւր զնախարարսն Հայոց ունէր, հանապազ ընդ նոսա ի խորհուրդ մտանէր թէ որպէս ի Սմբատ արքայ դնիցեն զորոգայթ բանիւք՝ այս ինքն ձերբակալ առնելով։

Ապա իրրև գարունն հասանէր, զօրք Յուսիայ և Գագիկայ՝ իւղ և ձիուամբ և նորին նախարարաց պատերազմեալ ընդ զօրսն Սմբատայ արքայի ի Նիգ գաւառին

(*) «Կրեցի այնուհետև, ասէ, ի գահճաց անտի մահահոտ իմն լըտանօք գանս և բանտս և գերարանս և արգելարանս ի խաւարչային տեղոջ և յանձուկ վայրս. այլև ի վիրապս և ի վիհս խորոց ընկեցայ սաստիկ և դառն կտտանօք։ Եւ պահապանացն սաստիկ աղաղակն և ձիչն դատապետ ոչ հնազանալ հատանէր ի լսելեացս իմոց յերեկորեայ մինչև ցառաւօտն. և սակս այնորիկ բարձեալ էր ինէն ինձ արտևանաց և հանգիստ իրանաց իմոց»։

ի Զկնավաճառ կոչեցեալ տեղին, որոյ զօրավարէին երկոքին որդիք արքայի՝ Աշոտ և Մուշեղ. թէև հարուածս անակնոսնելս հասուցին ի զօրս ոսոխականին, մինչև ահարեկել բովանդակ երկուցն զնդից նորա՝ ի ձեռաց երկուց քաջացն եղբարց, բայց ի լքանել Սևորդեացն ի զօրաց արքունի, Աշոտ ձեղքեալ զբունդ Թշնամեացն՝ ածաճապարի ի փախուստ, և Մուշեղ՝ որ ընտ եղբօրն օրինակի ածապարեալ էր ի փախուստ անհնարին քաջութեամբ հարկանելով զԹշնամին, բայց ձերբակալեալ ի դարանելոցն Սևորդեաց՝ ածեալ լինի առ Յուսուֆ:

Ընդ այս ոչ սակաւ խնդութիւն յուցանէր ոսոխականն յանձին, իբր թէ կործանեալ էին սիւն մեծ զօրութեանն Սմբատայ. որ և սահիպով մեծաւ ի գունդս գունդս զիւր և զԴագկայ զօրսն բաժանեալ՝ ասպատակ սփռէ ընդ ամենայն Հայաստան. որոց իբրև հուր հրդեհեալ յաւանս և ի գիւղս և յանպարիսպ քաղաքս՝ յաւեր և յապականութիւն զարձուցին, զեկեղեցիս կողոպտեցին, և զբազումս ի նոցանէ հրով այրեցին, և զոմանս քանդեցին. և զօրս միանգամ գոհն զարս և զկանայս, զաշխարհականս և զեկեղեցականս, զաղքատս և զմեծատունս, էր՝ զորըս զիրեցին, և էր՝ զորս սրով սպանին. ի դերս թիանց աստի և ի հարուածոց՝ զերծանէին որ անատիկ քաղաք և անմատչելի բերդք էին, ապաստանարանք մարդկան աշխարհին: Եւ որովհետև այնոքիկ քաղաք և ս ի վտանգ չարեացն կային, անտի և ս խոյս տուեալ ապաստանելոցն ի լերինս և ի խորս ձորոց՝ խոտովք և արմատովք կերակրէին. և բազմաց փափկասունք գոլով և իշխանազունք՝ չտանելով տառապանացն՝ անդէն և մեռանէին՝ իսկ որ ի նախարարացն էին առնոսա՝ բազումք կամակար անձնատուր եղեն ի Յուսուփ, գործակից նմին լեալ՝ և ոչ Սմբատայ արքայի, յորս երեսելքն էին չքնաղապեղ պատանին Վասակ որդի Աշոտ Սիսականի, և գեղեցկատեսիլն Սմբատ որդի Սահակայ եղբօր արքայի. և փոխանակ բարեաց առ յոսոխականն՝ չարիս անձանց նիւթեցին ի նմանէ. քանզի ի մտել եղեալ Յուսուֆ՝ զամենայն նախարարսն Հայոց կորուսանել, յուսա պատճառանօք զոմանս կապեաց, և խեղդել ևս զնոսա լսելեաց. և զայլս մահապարտ ցուցեալ՝ յայտնապէս սպան. և զկէս գանիւ և սովով կորոյս. և զօրս երեսելսս ի նոսին՝ զորոց և կասկածս ցուցեալ էր՝ մի մի կոտուանէր, որպէս զՈւփանն կոչեցեալ Գրիգոր Սիւնի՝ քեռորդի արքային Սմբատայ՝ զանձնատուր եղեալն յառաջագոյն՝ ի դէզ մահու սպանեալ՝ չքմեղս եղև և հրամայեաց թաղել զնա յեկեղեցի սրբոյն Սիմոնի: Յետ ետրա ապա և ձերբակալեալն Մուշեղ կորովն զորդի արքայի՝ գանիւ և սովով տանջեալ յուցաւութիւն հատոյ՝ դիզով մահու բառնայր ի կենաց, թաղեալ զմարմինն նորա ի Կապարան առ հարցն գերեզմանի՝ Աշոտոյ սպարապետի եղբօրորդւոյ արքայի, այսու մահուամբ վճարի ի կենաց՝ յոսոխականէն և երիտասարդն Սմբատ որդի Սահակայ եղբօր արքայի. զոր Կապիկ արքայ խնդրանօք թաղել տայ ի Կարսոնս: Եւ պատանին Վասակ՝ որդի Աշոտոյ Սիսականի՝ ընդ Սմբատայ կալանաւորեալն ի բանտի չդտեալ հնարս ազատութեան

յոսափկանէն, յանկարծակի իբրև ցայտեալ պիշերի յարկնլանացն՝ փախուցեալ անկանի յաշխարհ իւր ի Սիւսականս։

(911.) — Սահակ և Մաշտոց Սիւնիք անուանալ զասպատական հնդկաց իւրեանց, և լուեալ նմա զմահ նզբօր իւրեանց Սուփանն Գրիդորի՝ և զայլոց նախարարացն, առեալ զամենայն աղխ նոցա իւրեանց՝ պիտկին ի Ծովակն Գեղամայ՝ որ էր յիշխանութեան իւրեանց, ուր նաւակս և լաստս յարդարեալ՝ մտին ի Սևան կղզի, բայց ոչ անպատճառ պաշարեցան ի հինից ասպատակաց ըստ հրամանի ոստիկանին. վասն զի լուեալ զփախուստ նոցա՝ առաքեցին ոստիկանն և Գաբրիէլ զօրս զկնի նոցա. որոց եկեալ և չեւ ևս պատրաստեալ կան ի կղզին մտանել՝ նոքա ամենայն աղխիւք՝ աճապարեալ ելին յայն կողմն, և յետոյ խրատուն ասպատակաց զհետ իւրեանց՝ հարուածեալ զնոսին՝ անցին պաղարեցան ի գաւառին Գարգմանաց յԱծոյ աշխարհին։

Ընդ այս ժամանակաւ Յովսէփայ՝ վերըստին սիւնեաց զասպատակ յաշխարհն Սիւնեաց և յիւր Ծովակին Գեղամայ, ուր կային բնակիչք, և ի կողմանն Տաշրաց և Կանգարայ՝ աւար հարկանել զերկիրն ամենայն և զաղդն Ճոպացեալս՝ առնել ձեռաքաղ։ Եւ ինքն խորհուրդ արարեալ ընդ Գաբրիէլ և ընդ մնացեալ նախարարս Հայոց առ ինքն՝ առաքեաց և զնոսա զօրօք ի վերայ Մարշակերտ ամրոցին՝ առնուլ զայն. ուր և խոստացեալ էր Գաբրիէլ զնալ ոստիկանին և զհանդէս թագաւորութեանն կարգել, և զիւրաքանչիւր նախարար յիշխանութիւն մեծ հաստատել՝ և դառնալ ինքեան յաշխարհ իւր։

Խաբեալ Գաբրիէլ և նախարարացն ի դաւաճան միտս ոստիկանին, զնան և զօրքն փակին զՄարշակերտ. բայց իբրև նակչաց այնորիկ ընկալեալ զհարուած սատակիկ ի զօրս իւրեանց, մեծապէս խայտառականօք դարձան ամօթալառ ոստիկանն կնոջ։

(913.) — Յետ այսորիկ ըղձացեալ Յովնփայ ղխովին տիրել բոլոր աշխարհին՝ Ջանայր ձերբակալել զՄբատ, և յայս գործ դաւաճանութեան՝ նենգութեամբ խոստացեալ Գաբրիէլ թագաւորեցուցանել ի վերայ Հայաստանեայց, յամենայնի առնէր զնա ինքեան գործակից՝ զի զարքայ սպանցեն։ Ապա ժողովեալ զամենայն զօրս իւր և զՀայոց՝ զոր ի ձեռին իբրում՝ խաղայ ընդ գարնանամուտն ի վերայ Ամբատայ հանդերձ Գաբրիէլ և Գուրգենաւ՝ յամրոցն Կապուտայ, ուր նստէր Ամբատ փոքուր զօրօք։ Եւ իբրև ի պատերազմին յառաջ մատուցանէր Յովսէփ զզօրս Հայոց և զիւրան խնայէր, որք զհարուածս ոչ սակաւ ընդունէին ի կորովիացն նետաձգողացն ամրոցապահաց, արքայ Ամբատ խնայեալ ի կնտորածս Հայոց, որք վիրաւորեալ իւր զայնչափ աղէտս թշնամութեանց կրէին, հոգացեալ վասն փրկութեան նոցա, և զհարուածն դադարեցուցեալ՝ խնդրեաց յոսափկանէն յետկալ կրժման՝ խնայել վնասն և ի զօրս իւր, և ապա անձնատուր եղև նմա։ Եւ յայնմհետէ ապա թէև իշխանութիւնէր զնա տալ երես, բայց օր աւուր խորհէր սպանանել զնա։ Եւ զի այսմ գիտակ էր և արքայ, հնարացաւ ի նմանէ պատճառաւ իւրք ի

Հիրակ դաւառ, մինչև ցաւուրան ցայնոսիկ, ուրանօր վախեաւ և Դաւիթ հանդերձ Դուրգինաւ երթարը իւրով ընդ որ զանդիտեալ Յուսիայ, թէ մի՛ դուցէ գնացեալ միաբանսցին վախճանեայքն ընդ Ամբատայ, կապեաց ի շղթայս՝ առ իւր և դնել զնախարարան Հայոց, և յետ սակաւուց հրաւիրեալ առ ինքն և զԱմբատ կապեաց և գնա ի շղթայս և եդ ի բանտ խաւարային ի Դուին քաղաքի: Յորում ակաց զամ մի ողջոյն, ուր և զպետս կինազ լսեն նայէին նմա, զի հնարէին դարձուցանել զնա ի հաւատոց:

(914.): — Ապա յորժամ զիւիր զօրօք ասպիկանն ի վերայ ամրոցին Ներնջակայ ի Գողթան գաւառի, էած անդր շղթայիւք և զԱմբատ. զի զօղեալ էին յամրոցին բաց ի բնակչացն՝ և տիկնայք երեսփոխաց Հայոց, որպէս մայրն Ամբատայ Սիսակեանց, և կին նորա՝ որ քոյրն էր Գագկայ բռնաւորի, և կին Սահակայ եղբօր նորին Ամբատայ, և այլ ազատ կանայք և բազում որդիք նախարարաց. որոց ոչնչ կարացեալ առնել ասպիկանն անօրէն, ատն՝ զանօք հրամայէ չարչարել զԱմբատ Երքայ յանդիման եղելոցն ի բերդին, ուր յետ բազում խոշտանգանաց՝ որով հատուել զղեալս երանելի Երքային՝ զմարմին նորա ածեալ ի Դուին՝ բևեռեն ի լանջի ի նախատինս Հողին, ըստ հրամանի Ասպիկանին, որպէս և լսօրէն գրեալ է ի վարս իւր ի հատորն 5:

Իսկ զամրոցն դաւանօք իմն ի ձեռս ածեալ ասպիկանին, արարին անդէն կոտորած սարսափելի, մինչև ի ծագիլ արեգականն՝ կարմրացեալ երեսք քաղաքն ասլեամբ սպանելոց. և ի միացելոց ղեղեցիկ և զառոյգն զերեզին հանդերձ կանամբք և որդւովք մեծամանից, և զքաղաքն ողջոյն յաւարի առեալ՝ չուեցին ի Դուին. ուր և կրկնեցին զնեղութիւն և տառապանսն, որպէս վկայէ պատմութեանն. «Ընդ դանձք նոցա, և առեալ հարան զարդք և կազմուածք տանց նոցա. և այսպէս կոծ և աղաղակ և կականուածն և ձիչ բազում յանդարանս նոցա լսելի լինէր:

(916.): — Ընդ գործս քաջութեանց Աշոտոյ որդւոյ արքային Ամբատայ, որ կալաւ միով զաթոռ Թագաւորութեան նորա, առնէ յառաջ, զչարեալ Յուսիայ ասպիկանին, (որ իմմին ժամանակի նահէր յաշխարհս Աղրպատականն), զորս արար նա խլել զօրաց իւրոց եղելոց ուրեք ուրեք յաշխարհին Հայոց, զորս ընդ ձեռամբ ունէին, յամենայն կուսակալութեանց պարսից և Աղրպատականի զօրս հանեալ առաքեաց անպատակութեամբ ի Հայս զարձեալ կոտորել և դերել զաղդն Համօրէն և աւերել զաշխարհն, զի ժամ դիպող հատուսցէ զանմիաբանութիւն Հայ նախնեացն:

(917.): — Մտին ի Հայաստան զօրք Յուսիայ և կուսակալացն պարսից, և յարձակեալ յաւարի առնել ի դիւղս, զոմանս սրոյ եռաւն ձարակ, զոմանս վարեցին ի գերութիւն, և ի գերելոց զծերս և զպատանեսն ընդվզէ կոտրէին, և զոմանս տղայս անդէտս ի զրկաց մարցն հանեալ՝ զդեմն հարկանէին. զկիսեան ընդ ոտիւք կոխոտէին և զոմանց պատառեալ զորովայն, ըզկիսեալսն ի բաց կորկռեալ՝ արտաքս ընկենուին. զմանկունս ի հարց և զերեզաս ի հարազատից բաժանէին. զկին յառնէ և հարան ի սկսել յարիշատէին. յորս էր

տեսանէր, ասէ Յովհաննէս Կաթուղիկոս, տեսութիւն ողբալի, և ողբ անհանդուրժելի, և լալագին անասանելի, և բանսուին կրծից և կքուին արեւանաց, և դողուին անձին և ցրտուին գերդ և խըզուին հերաց,,։ Եւ այսպէս ուր ուրէք և ոտք կոխելոյն նոցա, զնոյն անցս անցուցանէին բաց յայնոցիկ՝ որք փախուցեալքն էին յամուրս ամրոցաց և քաղաքաց։ Ապա և առ պահասելոյ կերակրոց՝ զգերեալսն բազումս նօթիս ի մահ հասուցանէին, և առ դարձուցանելոյ ի հաւատոց՝ դառն տանջանօք զնոսա սպանանէին, զոմանս կնդաձեւն թաղէին, և զոմանս ընդ բեռամբ ձիվէին, և զայլս սրկեալ խնդրէին, զկնի կրծոց ի վայր սրով ձեղքէին, և զշատս ևս յոտից և ի ձեռաց ծայրատէին, և էր՝ զի զոմանց զոտս և զգլուխ ի մի սրկեալ՝ այսր անդր դարձուցանէին, և սրով ընդ մէջ կտրէին. էր՝ զորս յերկիր տարածեալ՝ արջառաձեւ յորովայն և ի կոտս հարկանէին և ի քարշ յանձգուցանէին ցաւանգիլ ընդն. և էր՝ զորս ըստ իւրաքանչիւր անդամոց՝ կացնով ջարդէին, զորս ընդ մեռեալս կենդանւոյն թաղէին և զորս դըէխիվայր ջծատոց կախեալ գանէին։

Իսկ զորս ևս ի գերելոցն ապրեցուցին զգերեզիկս և զաւազդս զարս և զկանայս ըստ ոստիկանին հրամանի, ածին առ նա ի Գըէբին. ընդ որս քաղցրութեամբ խօսեցեալ նորա առ ի դարձուցանել զնոսա ի հաւատոց, խոստմամբ մեծամեծ պարգեւաց ևս և դարձուցանելոյ ինքեանց զատուցուածս նոցին, և տեսեալ եթէ հոգատաւոն կան նոքա ի հաւատս, պէսպէս տանջանօք խողխողեալ զնոսա սրով։ Յայս տանջանս մատուցանէր ոստիկանն և զամենեսեան զնոսա՝ որք յատպատակացն իւրոց հետզհետէ կապանօք անդր ածեալ լինէին ի կոդմանց կոդմանց աշխարհին Հայոց։ Ի նոսա էին եղբարք երկու ի Գնունեաց ազգէ՝ Գաւիթ և Գուրգէն, որոց առ գեղեցկութեանց և երիտասարդ հասակացըն վայելչութեանց՝ ոչ երբեք պիջևալք ի հրապուրանս ոստիկանին և ի պարգեւս երկրաւորս՝ ուրացողութեամբ հաւատոց, և յաղաչանս ևս նորա, այլ անխափան հաւատով խոստովանելով ըզՔրիստոս՝ կատարին ի հրապարակի քաղաքին առ աչս բազմութեան ժողովրդեան։ Ի սմին անցս չարչարանաց մանուկ աշխարհիս մերոյ՝ և ոմն ի կուսակալաց Յունաց զբազմութիւն գերեաց ի մի խումբ արարեալ իբրև պատակ բոլորձև, յորժամ ոչ լսէին նոքա յորդորանաց ուրանալ զհաւատս, և շուրջ զնոքօք ընթացեալ՝ հրամայեաց հատանել զգլուխ նոցին, մանուկ եղով ի նոսա ոմն Մխիթարէ անուն եօթնևտասան ամաց ի Գուգարաց աշխարհէն, յափշտակեալ իզօրականէն ի միջոյ խմբին, առ զուարթ ածադիկ պայծառութեան դիմացն, ոչ կամեցեալ նորա զատանիլ յընկերացն երանելեաց, վերստին անկանի փախստեայ ինոսին և ընդ նոսա կատարի. որոց կարգեցաւ տօն յիշատակի ի ԻԱ Մարերի, որ է ի յունիսի 3, որպէս գրէ Յովհաննէս Կաթուղիկոս։

ՅՕԴ· ԻԲ·

Յակոբ և Խոսրով հերքեալ Նպեկոպոսէ Աչեանաց։

(943.)։—Յաւուրս Ենանիայ Հայրապետի Մոկաց, որ ևհայ Կաթուղիկոս

ՅՈԳ. ԻԹ

ԹԷՈՖԻԼՈՍ ՀԱԿԱՌԱԿԱՆՈՑ ԿԱՆՈՆԱԳԻՒՏ ԱՆԻ ՂՄԱ 2։

(1035)։— Յովհաննէս-Սմբատ Ըրբայ՝ որ և ՂԱՆիին վաճառեաց, գժամինեալ ի վերայ ընդերկար տարակացութեան պետրոս Հայրապետի ՅԱՆուոյ՝ որ Վէտադարձն կոչեր, նոյնպէս և նախարարք Հայոց, յորժամ խաբանօք իւրեանց կալաւ զնա և եդ ի բանտի, ածեալ ՅԱՆի քաղաք զԱնահայր Յանահունի վանից ՂԱԷոսկորոս, կոչեցեալ զնա Թաթուղիկոս փոխանակ պետրոսի. բայց ոչ ընկալաւ երեսիւք Նպիսկոպոսաց Հայոց զԹաթուղիկոսութիւնն նորա յաղագս կենդանի գոլոյ օրինաւոր Հայրապետին, և ոչ իսկ զանուն ԴԷոսկորոսի թոյլ եառուն յիշել ՅԱկէղեցիս ի սուրբ պատարագի, և ոչ ձեռնադրել զոք Նպիսկոպոս. Հայս առիթ և ժողովուրդ երկրին չէին հաճեալ ընդ նա, բայց եթէ արքայն և նախարարք իւր։

Յայս ամենայն անարդութիւն Հայս այլոց՝ զՀարեալ և ԴԷոսկորոսի ընդդէմ մահացողաց՝ սկսաւ և ինքն գործել զանարժանս. կոչեաց զՔաղուման յանպիտանից և ի վատթարաց ՅՆպիսկոպոսութիւն, և զորս արժանիքն էին, ընկից յիշատակութենէ, և յափշտակեաց զտաճարաւճս նոցա, և զմերժեալսն վանս բանի յանցանաց՝ դարձոյց յաթոռն իւրեանց. որով և անհաւ ընդ նզովիւք ի Ծողովոյ Նպիսկոպոսաց և վարդապետաց Հայոց՝ ինքն և կաւակիցք իւր՝ Թագաւորն և նախարարք՝ որք եղեն պատճառք չարեացն ամենայնի և ընկիցին զՊետրոս՝ զսրբասնեալն վարուք։

յաղթաւմար յետ նզիշէի. Յակովբ Նպիսկոպոս Միւնեաց աշխարհին՝ հանախոհ ինքեան արարեալ զԽոսրով ոճն քորեպիսկոպոս, յարիցաւ յաղանդաւորս Թոնդրակեցւոց, և զբազում անտուոր ծէս նմոյծ ՅԱկղեցիս Հայոց, յորս և սերմանէր զբազում բանս մոլորականս. յորոց մին էր և այս, թէ չէ պարտ Նպիսկոպոսաց հնազանդել Կաթուղիկոսին՝ իբրև վհատունի քան զինքեան, որով և յարուցանէր զխռովութիւն բազում։

Ասեալ այս ամենայն յականջս Ընտանեաց Կաթուղիկոսի՝ զրէ առ Յակոբ Նպիսկոպոս ի բաց կալ յայնպիսի մոլար վարդապետութենէ և յանտուոր ծխից. այլ իբրև հառս Հայրապետն, եթէ նա ինքն Յակովբ Նպիսկոպոս պաշտպան և ապաւէն ինքեան արարեալ զԳՀոյն Միւնեաց զկին որդւոյ Վ_ասակայ Միւնւոյ՝ արհամարհեաց զբան նորա, և ապստամբեալ յինքենէ՝ ապստամբեցոյց ընդ ինքեան և զբազումս և զոմանս ևս յիշխանաց Միւնեաց, նզովեաց զնա ինքն զՅակովբ Նպիսկոպոս, և գրեաց առ դշխոյն Միւնեաց ասել զնա ի ձեռս իւր. և իբրև դշխոյն ոչ լիներ յանձնառու, նզովէ և զնա հանդերձ իշխանօք Միւնեաց։ Որ և յետ վաղձանին Յակոբայ՝ գնացեալ ի Միւնիս՝ քարոզութեամբ գրաւեալ զմիաս իշխանաց՝ արձակէ զնոսա ի նզովեն կապից. և ձեռնադրէ նոցա Ըրբևպիսկոպոս՝ Վ_ահան ի գաւառէն Խաղաց։

ի բանիւս յայսցանէ երկուցեալ Ընքայ և նախաթարքն՝ իբրև պետրոս Ա՛այրապետ ոչ յանձն էառ վերստին զԸթոռն ըստ թախանձանաց նոցա, (1036 թ.) հրաւիրեցին զՅովսէփ պաթուղիկոս Ընտանիոյ հանդերձ Եպիսկոպոսօք իւրովք, և արքային Յողով արարեալ Եպիսկոպոսաց, Վարդապետաց և կրօնաւորաց Յունի քաղաքի, որպէս ասացեալ է մեր ի պատմութիւն Յողովոյն ի հատոր 5, անդ պարտաւոր դատեն զԼեոսկորոս, և ընկեցեալ Ընթոռոյ իշխանութեան՝ պատուիրեն ըստ Կօղն զոր ընդ ղեռով կրեր ըստ սովորութեան ժամանակին, զոր և յաքսորս առաքեցին ի վանս իւր ի Սանահին, և ածեալ վերստին զՊետրոս յաթոռն՝ նովին ի վերայ ամենայն ձեռնադրելոցն առ ի Լեսկորոսէ զապաշխարութիւն՝ ընդ բանիւ առնելով վնասու։

(Ի չեռագրէ)

ԱՐՔԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ՀՈՒԻՓՍԻՄԵ.

(Անցեալ թուոյն շարունակ)

Պիշերուան երրորդ ժամն էր, ըստ արքունի վայելչութեան, ժողովուրդը հրամանաց հանդէսը կկատարէր։ Նոյն գիշերը Վահագնի մեհենին մէջ նորա բազնին առջև Ա՛այոց թագուհին պիտի ներկայանար, ուր թագաւորին և ազգին հաւատարմութեան երդումը տայով պիտի պսակուէր։ ուսաի բոլոր մեհենանները զարդարուած էին ոսկւով, արծաթով և ոսկեհուռն դիպակներով, որոնք այն օրը թագաւորը կընծայէր ի պատիւ և ի շնորհակալութիւն դից, մանաւանդ Վահագնի բազինը քան զամենը շքեղ էր։ Ինքը Վահէվահեան Վահագն տաճարին ներքին սրահին մէջ բարձրահասակ և վեթխարի ձուլածոյ ոսկի անդրի կանգնած էր արծաթի պատուանդանի վերայ. ձախատը թևատարած արծիւ մը կսաւառնէր. ձեռքերէն սրածայր կայծակներ կտեղար, և պատուանդանին տակը վիշապներ սանձուած էին, որոց վերայ ահարկու աչքով կնայէր։ Իսկ քրմապետը անդադար բազինը բոլբոքելով սպիտակ ցլոյ մը ճղջիւրներէն բըռնած թագաւորին և թագուհւոյն դալատեան կպատէր։

Նոյն թագուհւոյն առաջատէն ոչ ոք լուր չունէր. և մինչդեռ ամբոխը դիղուած մեհենին դուռը կսպասէր, թագաւորական ապարանիյ դռնները ճռնչելով հոևէ հոև բացուեցան, արքունի սիպաւոր պահապանք զարհուրած ձայնասարհ կբանան, և մէկ աղջիկ մը վազեց դուրս եղաւ։ Արքնթանայ քաղաքին մէջ, գլուխը բաց, սևազոյն մաղերը խառն ի խուռն ուսերէն կախուած կծփան, ըղգեստը պատռտած, երկու ձեռօքը սփոփած մերկութիւնը կծածկէ. ճանապարհին ոչ մէկ տեղ կանգ չառաւ, ոչ մէկու մը հետ խօսեցաւ, վազելով կերթայ։

Ա՛անկնիք հոևէն։ Պաղաքին ծայրը հնձանքին մօտիկ սուսուր կերևի. կենանք դիտենք, և տեսնենք թէ ո՞ է. ինչո՞ւ սարսափեմ հոս կպատի։ Ընդ ձայն

լսուեցաւ. Յանուէմ է մեզ. Հայոց թագուհին է՝ առագաստէն փախստական։ Նոյն ձայնը կրկին լսուեցաւ աւելի ազդու. "Ելէք, կգոչէ, ելէ՛ք, սիրելի ընկերակիցք, յաղթեցի բռնաւորին, և ազատեցի զիս նորա պիղծ ձեռքերէն"։ և կրկին վազելով կընթանայ, կհասնի մինչև Երասխաձոր քաղաքին ձանապարհին գլուխը, և հոն ծունր կդնէ։

Ելան իսկոյն ընկերակիցք, և գինքը փնտռելով դէպի Երասխաձոր ձանապարհը սկսան երթալ. քիչ մի հեռուէն սրատուռչ ձայն մի լսեցին, որ լալագին կաղօթէր Աստուծոյ. Հռիփսիմէն էր այն, որ ցանկութեամբ մղեալ թագաւորին յաղթելով և քաղաքին փողոցներէն ընթանալով հոն կհասնէր. խնդութեամբ պատեցին և փարեցան իրեն։ Իսկ Հռիփսիմէ սկսաւ պատմել նոցա վայրենամիտ թագաւորին հետ կռուածը, և թէ ինչպէս գինքը բռնութեամբ ապարանք տանելով առագաստին մէջ արգիլեցին. կը նկարագրէր հարսանեաց հանդէսը, և թագաւորին անօրէն չար կամացը հակառակելով հետը ոգորած յաղթածը՝ իւր սրբութիւնը անարատ պահելով, ինչերկայացնէր վիթխարի հսկայ թագաւորին պարտութիւնը, և թէ ինչը ինչպէս աւիդաւոր պահապան զօրաց մէջէն՝ ոչ ոք իրեն ընդդիմանալ չկարենալով՝ առագաստէն կիսախչէր։ Ասոնք պատմելով նոցա կյուցանէր զգեստը՝ որ բռնաւորը պատառ պատառ արած էր։

Իսկ թագաւորը ինչ կընէ. առագաստը թափուր, թագուհին չկայ. ցանկութիւն, կատաղութիւն և ամօթ գինքը կտագնապեցնէն. կատաղած կընդունէ ապարանքը թնդացնելով. այն հրաշագեղ օրիորդին յիշատակը մոռնալ չկրնար. հնարք կը մտածէ, պարգև, իշխանութիւն կխոստանայ ո՛վ որ այն աղջիկը հաւոզէ և իրեն բերէ. բայց ոչ ոք թագաւորին կընայ այդ բանը խոստանալ։

Այս դիշեր էր. դուռդ մի գործք առջևներէն բազմաթիւ զահեր և կանթեղներ արքունի պողպատեայ ձեպով կանցնէր. պահապան գունդը քաղաքին մէջ քալելով կհսկէր, նուագարանաց ձայնը լռեցնել տալով ամբոխը կցրուէր, պատուիրելով որ հարսանեաց հանդէսը դադրեցնեն։ Բայց խումբ խումբ կվազէր կերթար ժողովուրդը հետաքրքրութեամբ գործքին հասնէն. հնձանքին քով գործքը կեցաւ. հազիւ դիշեր ժամանակ զահերուն լուսով կարելի է գործնք ձանչնալ. թագաւորին իշխաններն էին գործք, և դահճապետը դահիճներով։

Հնձանքին քովերը խումբ մը կերեւի՝ որք շփոթած կուգան։ Առաջ անցաւ մէկը գործքը ձեռք բերով. դահճապետն էր այն, որ տուրը պատենէն հանելով սկսաւ առաջ երթալ դէպի երեցած խումբն. վրան նայողը կասրսափի. ձեռաց երկայրի դաշոյնը արեան կաթիլներէն ժանգոտած էր. թագաւորը ընտրած էր գինքը իրեւ քաջ և հաւատարիմ՝ դահճաց մէջէն քան զամենը անգութը, և պատրաստած էր սաստիւ անթերի հրամանը կատարել. թիկունքը և լանջը նոյնպէս և թևերը երկաթապատ մինչև արմունկը կը հասնէր. իսկ ծոլքը և սրունքը մերկ էին. բարձրահասակ և ուժեղ կերևէր ամէն դահիճներէն։ Ահաւոր լռութիւն սիրած ամբոխին վերայ, սրտերն դողալով՝ աչ-

քին անկած դահճապետին վիրայ՝ կըսպասէին թէ ինչ հրաման պիտի լսեն և կամ ինչ դժնդակ հանդէս պիտի տեսանեն։

Դահճապետը մէյմը չորս բոլորը նայելով սուրը ձօձից, և մէկէն երկու կարգ դահճաց եկան երկու կողմէ կանգնեցան. իսկ ինքը երեք քայլ յառաջ երթալով ահաւոր ձայնիւ մահապարտը կանչեց. այն խուժդժին մէջ շփոթութիւնը և աղմուկը աւելցաւ։ Տիւանինք ջահերուն լուսով թէ ինչ կանոն ու կուլան սրտաշարժ և կձչէն, և մէկու մը հետ դիրկընդխառն վերջին ողջոյն կուտան սիրոյ, և չեն թողուր զինքը որ երթայ։ Այլ դահճապետը կատղեցաւ, գաղանի պէս մռնչելով հրամանը կրկնեց և մահապարտը կանչեց այնպիսի ձայնիւ՝ որ քովը կանգնող դահիճք անգամ սեղերէն ցնցուեցան. և ահա մէկը հազիւ ինքը զինքը ընկերակցաց ձեռքէն ձողպրկելով վազից, եկաւ դահճապետին ընդ առաջ։ Բան զրահիճը բարձրահասակ, սևագոյն մազերով դեռահաս չքնաղ օրիորդ մը էր. իսկ ամբոխը աղմկեցաւ մահապարտը տեսանին պէս, Հայոց Թագուհին է գոչեց։

— Տեսէք Հայոց դիւցազնացեալ հրաշալի Թագուհին դահճայ մէջ անխռով և աներկիւղ կանգնած, և որ արքայական առագաստին արժանի հարսնուած էր՝ արդ մահապարտի պէս անարգութեամբ կմեռնի։ Հայաստանի փրկութեան ժամը հասած, Գրիգորի տոհմն և չորս տասնաւոր աղաչանքը լսած Աստուած՝ զԹուխեան և ողորմութեան վճիռը կընքելու կուսական անբիծ կաթիլ մը կպահանջէր։ Գոչեցէք, սպասնացէք, Թող իջնայ Աստիճան պիղծ բազինէն, Թող փախչի Վահեվահեան Վահագն Տօրոսի լեռները, սրբեցէք նոցա պիղծ տաճարները, և Հռիփսիմէի պաշտած Աստուծոյն երկրպագելի սուրբ անունը իր արեամբը բաղնաց վերայ գրեցէք. գնացէք Երասխայ, աւետիս տուէք Հայոց Լուսաւորչին սուրբ Հօրը, և Շաւարշանի Պանդուխտի կուսական մաքուր աբրիշնեն բողբոջած շուշանները քաղելով բերէք Հայոց հրաշագեղ Թագուհւոյն ողջախոհ ճակատը պսակեցէք։ — Այլ ո՞վ է այն դահիճը, որ սուրը սիրար պիտի մխէ. կտրեցէք այն երկաթը, կտրեցէք անզգամին ձեռքը։ — Դահիճք իրարու նայիլ կնային, դահճապետը մոլորած՝ երկայն ատեն հրաման անոնք չկրնար։

Նոյն Հռիփսիմէ դեռ դահճայ մէջ կանգնած՝ բոցավառ աչքերով երկինք կը նայի. ո՛ր կմնար Աստիւած, և ո՛ր Աստղիկ. դեռ հեթանոսք ոչ այնպիսի դիւցազն և ոչ գեղեցկուհիներ տեսած էին։ Այլ Թագուհւոյն սուրհանդակները եւս եւս կհասնին. ուստի դահճապետը կատղեցաւ, և հրաման կանէ նախ մահապարտին լեզուն կտրել որով Թագուհւոյը կնախատէր, և չէր հաւանէր աննօրէն կամացը։ — Տեսէք անարդ երկաթը դահճայ ձեռքը կշողայ, և բարձրացիլ է մինչև Հռիփսիմէի կուսական ճակատը. — Թողէք, Թողէք, նախ ես ողջախոհ ճակատին հոգւոյն համբոյրը նուիրեմ, ապա դուք դահիճք ձեր հարուածը. օրիորդք Հայոց, որ կսիրէք զՀռիփսիմէ և նորա ողջախոհ վարուց հետևող էք, դնացէք յաղթանակը տեսէք։

Յանկարծ հեթանոս ամբոխը զարհուրելով ազատակից, դահճաց մէջէն սեղմի պիտակրանները սուրերը ձեռքերնէն ձգեցին. դահճապետը երկար մնկդի զարձուց, և օդան մէջ չահիրուն և կանթեղնեբուն լուսով արիւնանմերկ սուր մը կփայլէր, որ քան դահճապետին հրամանին հարուածը տալով գետնատարած ապտիկ կիսափակ աչքով կհեծեծէ, յորդահոս արիւնը զգաստ բերանէն վազելով գինքը կնկրկէ. Թող գայ Թագաւորը այն փոքրին ականատես լինի: Բայց դահճապետը այս առեն դահճաց նայեցաւ և ուրիշ հրաման մի տուաւ, որք գիշանիչ գազանաց նման յարձակեցան առնքը մկ Հոխխմէի վերայ, և զգեստներըը պատռտելով մերկացուցին գինքը, տանջանտանը կամրնաձ չորս ցից գետինը դամնուած էր, որոց երկուքին ձեռքերը կապելով և երկուքին ոտքերը, բորբոքեցին չահիրը և կանթեղները, և սկան պարկեշտասուն մարմինը այրել:

Փուրձ Գայիանէ, գնա հատուցա՛ բիմ սանդ տեղ, ինչպէս Թագաւորաց փառքերին չհաբուեցար, նոյնպէս մնա հոս չարչարանքներին անբկիւզ և անսասան կանթեղներուն բոցերուն մէջ ձնձղելով կտուչերի. գետնէ սնբը մարմինը՝ զոր արժանի չեղան Թագաւորը դեռևս, որ առեց արքայական պատասը, չընդունից երկրաւոր մեծութիւնը: և ինչպէս հոգւով նոր երեւել էր՝ արդ կտանքը ևս Աստուծոյ կընծայէ: համբուրէ սրբափայլ մարմրած աչքերը զոր դուն Աստուածային շնորհաց լուսով արծարծած՝ բազկացդ վերայ զինքը տնուցիր:—Իսկ դուք դահիճք, գնացէ՛ք, Թողէք որ չարչարանաց ցաւերը անդորրութեամբ քաշէ:

Բայց անդորմ են, նորանոր տանջանքներ կպատրաստեն:—Գոչից դահճապետը կրկին, գահիճք տարտափած ետևնէ նայեցան. և վերջին հրամանը սպասելին պէս՝ ոմանք սրերով աչքը կխոցեն, ոմանք գորը քարեր կթափեն, և ոմանք ալ դեռ գինքը կենդանի տեսնելով՝ կսրը կսրը կյօշռտեն:

Ետևէ գոչից դահիճներէն մէկը. դահճապետը դարձաւ ամբոխին և ասաց. ‘‘որ ոք Թագաւորին հրամանը կանարգէ՝ այսպէս կկորսուի,,, և ձեռքի դաշոյնը պատեհանը դնելով՝ նոյն հրամանը դահճաց ևս տուաւ: Իշխանները կփութան երթալ Թագաւորին իմացնել, և ամբոխը տարտափած իւր աղարշապատ կդառնայ:

Իսկ մեք երթանք սրբոյն Հոխխմէի Աստուածոյ սիրելի ազգային ոսկերքը համբուրելով՝ Հայաստանի փրկութեան համար աղօթենք:

Մ. ՊԱՐԵԱՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՌԱՆԳԱՊԱՏՈՒԹԻՒՆ.

(Անցեալ թուէն շարունակ)

Ինչու՞ ուրիմն չենք կարող եղբայրանալ, որ մը բրոշակ ավելի վայրենի կհանդիսերի մի քանիսի մէջ էլ կարող է երևիլ որևիցե առանձնական յատկութիւն կազմակերպութեան մէջ. զոր օրի-

նակ, մանկտոյ մանկերի ուժութիւնը, դոյնը, ևլն՝ որոնք անշուշտ փոխանցուում են սերնդին, ենայելով որ զուգութիւնը լինում է պատահական կամ առանց ընտրութեան:

Որովհետև տպագիր պատահական յատկութիւնների ժառանգականութիւնը շատ երևելի աւելն է բնութիւն մի քանի բնագիտական հնտազօտութեանց մէջ (որ օրինակ՝ մանաւանդ Դարվինին), ապա ժողովնք մի քանի փաստեր էլ ապացուցանելու համար ժառանգականութիւնը պատահական յատկութիւնների ծնողներն միայն մկկի մէջ:

1791 թուականին մի Ամստաչուսէթսցի*) այգեպան՝ Սկէթ — Ուրայթ անունով՝ ունէր մի փոքրիկ հօտ, որ բաղկացած էր մկկ խոյից և 12 կամ 13 ոչխարներից. ոչխարներից մկկը մի անգամ ծնաց մի այլակերպ գառն երկայն մարմնով և կարճ ու ծուռ ոտներով: Սկէթ — Ուրայթը յատուկ մի մեծ բազմութիւն այդպիսի ոչխարների, ինչպես գառն էր, և ահա ինչ նպատակաւ: Ամստաչուսէտսի այն կողմում, ուր բնակուում էր Սկէթ — Ուրայթը, արտերը բաժանուում էին ցածր ցանկերով, իսկ ոչխարները լինելով ճարպիկ և ուժեղ՝ առանց դժուարութեան ցատկոտում էին ազատ ատար և ընկնում էին ուրիշի արտը: Այս բանը ի հարկէ պատճառ էր դառնում շատ խռովութիւնների հարևանների մէջ, այնպէս որ Սկէթ — Ուրայթին մի յարմար միջոց էր սպասում: Նա ա-

(*) Ամստաչուսէտսը Միացեալ Նահանգների արևելեան կողմում՝ մի նահանգ է:

հանուն մտածեց. նախ բոլոր ոչխարները ունենային կարճ ու ծուռ ոտներ, այն ժամանակ ի հարկէ նրանք չէին կարող ցատկել ցանկի միջս կողմը: Այս մտածմանց համեմատ, երբ գառը մեծացաւ, նա մորթից առաջուայ արուին (խոյին) և արձակից հօտի վերայ սորան, որով հետև այս այլակերպ կինդանին արուս էր: Այսպիսի խառնուրդների հետևանքն եղան կամ բոլորովին հատարակ գառներ, կամ կատարելապես ծուռ ու կարճ ոտներով, իսկ երբեք չէր պատահում երկուսի խառնուրդը ունեցող ոչխար: Մի քանի տարում այդպիսով յառաջացրաւ մի մեծ բազմութիւն նոր սերնդի և նրանց շատ մասը այնուհետև տարածուեցան բոլոր Ամստաչուսէտսի մէջ: Տարբերդրեալ՝ ոչ մկկը չէր մտածում գոնէ մի կտրիճ կազմելու (գիտութեան յիշատակի համար), և ինչպէս հաստատեցան էնորա համար, որ այս սեռը դարձաւ հասարակական և սովորական, որ նորա վերայ ուշք էլ չէին դարձնում. ինչպես երևում է՝ այժմ այս ցեղը բոլորովին անհետացած պէտք է լինի: Նրանց անհետանալուն առաւել պատճառեղան ջինոս անուանուած ոչխարները, որոց բուրդը աւելի լաւ էր քարձոտնեայ ցեղի բուրդից՝ և ինքեանք մերինոսները շատ հանդարտ էին և չէին ցատկում ուրիշի արտերը, այնպէս որ փոքր առ փոքր կարճոտնեանների բոլոր ցեղը անօգուտ դառնալով՝ անհետացաւ, և ինչպէս երևում է՝ բոլորովին ջնջուեցաւ: Ամերիացի վեցմասնեայ Հօրացիո Սպլէյան՝ 22 տարիկան հատակում պսակուեցաւ մի հասարակ հինգմասնեայ օրիորդի հետ, որով

հետև Մալաքիայ կղզում՝ քան երեսուն թին՝ վեցմանանոց օրիորդ չկար: Այս ամուսնութեան հետևանքն այն եղաւ, որ ծնուեցան 4 զաւակունք՝ մեծը նո ցանից Մալվադօր անունով՝ կատարեալ պես վեցմանանոց էր իւր հօր նման. երկ րորդը Գէորգ՝ ունէր հինգ հինգ մատն ձեռների և ոտների վերայ. բայց նրանցից մէկը անկանոն էր և ցոյց էր տալիս ձըգ տումն դէպ ի փոփոխուն. երրորդը՝ Ընդ բէաս՝ ունէր ուղիղ կրկնապատիկ ձեռ ներ և ոտներ հինգական մատներով. չոր րորդը՝ աղջիկ Մարիամ՝ թէև ունէր նոյնպէս հնգական մատներ, բայց ձեռ քի մեծ մատները (բոլթ) անկանոն էին և ցոյց էին տալիս ձգտումն դէպ ի վեցերոր պը կազմելու:

Այս մանուկները մեծացան և կատա րեալ հասակ առնելով, բոլորն էլ պատ կուեցան և ի հարկէ այս ամուսնութիւն ները կատարեալ էին հատարակաբար հնգ մատնեայ օրիորդների հետ: Գոյա հետա նքն սա եղաւ: Մալվադօրը չորս զա ւակ ունէր. նրանցից երկուսը մեծ տղայքը և մի աղջիկը բոլորովին վեցմատնեայ էին, ինչպէս և պապը. չորրորդը ունէր միայն հնգական մատներ: Գէորգը նոյնպէս ու նէր չորս զաւակ. նրանցից երկուսը աղ ջկունք՝ վեցմատնեայ էին ձեռներով և ոտներով. երրորդը՝ աղջիկ՝ ունէր վեց մատն աջ ձեռի վերայ, իսկ միւս անդամ ները կանոնաւոր էին. չորրորդը՝ տղայ՝ հնգմատնեայ էր ոտներով և ձեռներով: Ընդբեասը, որ իսկզբանէ բոլորովին կատա րեալ ազգածնուած էր, շատ որդիներ ունէր և բոլորն կանոնաւոր զարգացած ձեռնե րով և մատներով: Մարիամը հինգմատ նեայ տղամարդու գնաց և ունէր չորս զա ւակ, որոնցից մեծը՝ տղայն՝ ունէր վեց կան մատներով ոտներ:

,, Գարձեալ մեր ուշադրութիւնը, ա սում Գէկկէլին, այս անսովոր երևոյթի վե րայ. գուք տեսնում եք այստեղ պատահա կան փոփոխութիւն, զոյն՝ ինչ որ մեք անուանում ենք հալմո-ընէ-ն (անկանոնու թիւն, ոչպարզութիւն). այս հաշմութիւնը կամ դէպ ի փոփոխութեան ձգտումը ա ռաջին քայլում տկարանում է զուգակ ցութիւն կանոնաւոր՝ զարգացած կնոջ հետ: Մենք բոլորովին իրաւունք ունինք սպա սելու, որ եթէ հաշմութիւնը և կրկնը ւում այդպիսի խառնուրդից յառաջա ցած զաւակների մէջ, նա բաժանուում է զուգապես երկու տարբերների (տկզմունք ների) մէջ, այս ինքն՝ զաւակների կէսը կժառանգէ հօր կազմութիւնը, իսկ միւսը կինայ կանոնաւոր և կատարեալ զարգա ցած մօր ազդեցութեամբ, բայց յատկապես երևում է առաջնութիւն հաշմա կան յատկութիւնների:,,

,, Այս հետևանքը տկարանում է, թո ւլանում կրկնի զաւակների ամուսնական կանոնաւոր զարգացած կանանց հետ, բայց և այնպէս չնայելով այս տկարա ցեցականութեան՝ անկանոնութիւնը գերա զանցում: Երկու՝ ինչ կպատահի՝ ե թէ ամուսնական բոլորովին հաշմային նախատիպները, զոր օրինակ՝ եթէ Մալվա դօրի երկու որդիքը պատկուէին իւրեանց հօրեղբայր Գէորգի աղջիկներանց վերայ: Դրանք բոլորը, ինչպէս վերևը ասացինք, ունէին ձեռների և ոտների վերայ վեցա կան մատներ: Շատ հաւանական է, որ նրանց զաւակները կլինէին անկանոն նա

խաղալափարի զարդացման շարունակողները։ Մեք անկինք արդէն, որ Մարիամի չորրորդ զաւակի մէջ դէպի անհանդուրժութեան ձգտումը (որ արդէն թուլացած էր երկրորդ սերնդում) անհետացուել էր, մինչդեռ Ընդլեանի որդիները, որ անհանդուրժութեան չէին հոգալ ներդաշնակութեան։ Այս պատահմունքը շատ օրինակ է մեզ և ապացոյց, որ բնութիւնը ձգտում է հաստատել միանդամ ևրած փոփոխութիւնը։ Յայտնի է, որ մի օրուայ չէ բերում, այլև անհնարին ձգտումն դէպի վերնոյնը կրկնելը այնքան անդորկ է, որ հանճարեղ նախաձեռնի հետ էլ վարուելու յոյս չկայ այս առանձնութիւնը փոխանցանել երրորդ սերունդ։

Ուրիշ ամբերտոսի բոլոր մարմինը, բաց երեսից և ձեռի ափից, ծածկուած էր ոլոշներով և նորա բոլոր վէր պատահները թէև ծուռ էին հասարակ մորթիով, բայց վէր շարաթից չեն տարաձգին վերնոյն անհոգութիւնը ներկայացնել մորթու վերայ։ Նրա որդիներից հինգը մեռան անդառնալի։ բայց մէկը՝ մնացածը՝ առողջացան։ նրա որդիքը ունէին վերնոյն յատկութիւնը, որը այսպիսով միշտ հինգ սերունդ անց և երևում էր միշտ մեկ պատահարների վերայ։ Ձեռնարկականութեամբ նշանակ փոխանցուելին զանազան ձաշակներ դէպ ի ներքնակողմերը. նկարագրուած է մի ընտանիք, որը երեք սերունդ շարունակաբար ունէր առանձին դղրդանք բոլոր հինգ մատներին, որը նկատել է ինքն Լամարկ։ Մի ընտանիքները ունին այնպիսի առանձնութիւն, որ բոլորովին չեն կարողանում ուսել մի որևիցէ կերակուր, զոր օրինակ՝ պատիր, որի հոտը անդամ բնական է արդէն ուշաթափութիւն պատճառելու այդպիսի մարդկերանց։ Յայտնի են պատահմունքներ, որ դէպ ի միջը զղուանք փոխանցուել են ընտանիքում մի քանի սերունդ։ Հոլանդիայում ապրում էր մարդ, որ սաստիկ ցանկութիւն և սէր ունէր դէպ ի մարդկային միս. նորա աղջիկը թէև ծննդեան առաջին տարուց որբացաւ, որովհետև ծնողքը պատժուեցան, այնու ամենայնիւ սաստիկ սէր ունէր այդպիսի մսի։

Ովքե՞ն կարող արդեօք այն պատահմունքները մեզ բացատրել թէ՝ ինչո՞ւ մի քանի սերնդանեաց ցեղեր հանկարծ ունին մի որևիցէ կերակուր՝ և զզուանք նրան՝ որով կերակրուում են նրանց սերնդը։ Մինչև անդամ մի քանի հիւանդութիւնների հակումն փոխանցուում ժառանգաբար. քննել են ընտանիքներ, որոց մէջ կուրութիւնը, որ պատահում է մի որոշեալ հասակում, փոխանցել են ժառանգաբար։ Մի քանի ուսոյ մանկանները մինչև անդամ առաջարժումին կոյր ձիերը առանց փորձելու, զգալով այնպիսի անհանգիստ՝ որոնք ունին հիւանդութիւն աչքերի մէջ և ծննդենից հակումն ունին կուրանալու։

Հաստերը՝ ժառանգականութեան այս պիսի պատահմունքները բացատրուում իրրև ընդհանրապէս երևոյթների միասին դասդասիայնուած. զոր օրինակ՝ ուսումնական Լիօնը՝ հետևեալ միտքն է յայտնում։ «Մեզ շատ անգամ ասում են ժառանգական ձիրքերի, ժառանգական

մեղքերի և բարեգործութիւնների հա-
մար. բայց իւրաքանչիւրը, ով որ կկամենայ
գործը քննել բանագատաբար՝ կհամո-
զուի, որ մեք ապացոյց չունինք այդպիսի
ժառանգական յատկութիւնների: Մինչ-
ցը, որով ապացուցանում են դրա կա-
րելիութիւնը, չափազանց անհիմն է: Յա-
զովումն մտածական առանձնութիւնների
մի քանի յատկութիւններ, որ ունին ծը-
նողքն էլ, որդիքն էլ, և եղրակացնում են՝
որ այս յատկութիւնը ժառանգական է:
Ս յապիսի միջոցով կարելի է բացատրել
մի դրութիւն՝ ինչպես հաձելի կլինի, ո-
րովհետև իւրաքանչիւր հետազօտութեան
մեծ դաշտավայրի մէջ կգտնուին բաւա-
կանին պատահական համակցութիւններ,
որ կազմել մի որևիցէ եղրակացութիւն
այն հարցերի՝ զոր մեք կամենում ա-
պացուցանել։,,

,,Չէ կարելի չհաստովանուիլ, ասում
Լիւիսը իւր Արօրեայ կենաց մարդաբա-
նութեան գրքի մէջ թէ՝ ժառանգականու-
թեան վերաբերեալ ապացուցական պա-
տահմունքներից շատերը՝ ենթարկուած
էին ամենահարկաւոր կրիտիկայի, և թէ
նրանցից շատերը անկար են բոլորովին.
բայց կընդունի՞ արդեօք իւր վերայ Պարոն
Ռոկը հերքելու թէ՝ մարդոց զանազան
հակումների առանձնութիւնները կախու-
մն ունի մարմնակազմութիւնից: Ենթէ
նա չընդունում իւր վերայ զայս հերքե-
լու, ապա նրա կասկածանքը անհիմն է,
որովհետև մի առաջարկի անդամ կան-
խածանք չկայ թէ՝ կազմութիւնը փոխան-
ցուում ժառանգաբար, նա կարող չէ ա-
սել, որ պատահական զուգադիպութեան
ներով են ծնում անփոփոխ զանազան
կենդանիների զանազան ցեղերը, որ սորա
համար է բուլդօգը (bouledogue շան մի տե-
սակն է) նման Ռուլդօգին և Թերիերի
(նոյնպէս շան մի տեսակն է)՝ որ Ռուլդօ-
գի խառնուրդը նման է և Թերիերին և
Ռուլդօգին: Նա չէ կարող ասել, որ պա-
տահմունքների ընթացքութեամբ հը-
րեաները բոլոր աշխարհիս վերայ նման են
միմեանց իրենց, մինչդեռ այս նմանու-
թիւնը պահպանուում միայն միշտ հրէա-
ների իւրեանց մէջ ամուսնակցութեամբ
և ուրիշ խառնուրդ հետացնելով: Նա չէ
ասել, որ պատահմունքն է պահպանում
դարձեղջերուայ կենդանիները կամ ազա-
հիները և տալեն է շան կամ ձիու տոհ-
մային ցուցակին ոսկեայ վողերի ար-
ժողութիւն։,,

,,Եթէ ծնողները չտային, շարունա-
կում նա (Լիւիսը), սերնդին իւրեանց
մարմնի կազմութիւնը, իւրեանց առանձ-
նութիւնները և զերազանցութիւնները,
էր լինիլ աշխարհիս վերայ ոչինչ նման
նրան՝ ինչ մեք անուանում ենք ցեղ, պէս:
Ամենահասարակ փողոցի շունն էլ կունե-
նար կարողութիւն լինելու այնքան թան-
կագին՝ ինչքան և ամենալաւ սեռի շունը:
Խարակը (շուն) կարող էր որսի մէջ հը-
մուտ նկատող լինիլ և բնականին ձին
յաղթանակ կատարող արշաւահանդէս-
ներում: Բայց ամենօրեայ մեր փորձերը
մեզ համոզում են, որ անկարելի է այս:
Գիտութիւնը մեզ ասում, որ պատահ-
մունք չկան: Ա արմնակազմութիւնը մեզ
սովորեցնում է, որ յատնորդը միշտ և ան-
պատճառ կժառանգէ ծնողների կազմա-
կերպութիւնը. իսկ եթէ կազմակերպու-
թիւնը փոխանցուում է, ապա նրա հետ

պէտք է փոխանցուին և ձգտումները ու քննդունակութիւնները։,,

Ներել մեք ընդունինք, որ ժառանգականութեան վերաբերող ժողովածի վասն երից շաբերը բանասաեղծութեան չեն պատասխանում, սակայն մեք ունինք և մի քանիսը, որոնք կատարածանքի ենթարկուել չեն կարող։ Բայց այնպիսի հարցմունքներում, ինչպես ժառանգականութիւնն է, մեկ հիմնաւոր փաստը կինչանակէ աւելի քան պհարիւր անհիմն փաստեր վասն որոյ ունենալով մի քանի այդպէս հաստատ փաստեր, մեք կարող ենք ընդունել իբրև ամենահիմնաւոր դրոյթիւն։ Պատահական խոտորմունքները և հակումները կարող են փոխանցուիլ չհանորդներին առանց ընտրելու անհատներ՝ և կարող են լինիլ պատճառ բնական ցեղերի կազմութեան։

Ա. Ղ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ.

Ի Ռոֆթ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ *).

I.

Ով Հայաստան, մենք Հայ ենք,
Քեզմէ ինչու՞ հեռի ենք.
Պարսկաստանի խորունկէն,
Մեր սրտեր քեզ կարօտ են։
Օր կ՚լինի՞ քեզ տեսնեմ,
Սիրով հողդ համբուրեմ,
Քարինքդ մեկ մեկ գրկեմ,
Արտասուքով ողողեմ։

Մինչ եռայի ի դորով։
Երբ Վաղարշապատ գնացի,
Ուսման գրքեր կարդացի,
Երկրագունտի քարտից մէջ՝
Հայաստան չատ սիրեցի։
Մի օր տեսի ի տեսլեան,
Անհեթեթ մի կերպարան.
Ո՞վ պատանի, քո բաղդն եմ՝
Զքեզ, ասաց, անգ տանեմ՝
Էրգեան ասիր Հայաստան,
Նա է քեզ վերջն ապաստան։ . . . .

II.

Կարաւանն ահա եկաւ,
Դէմքերս ուրախ փայլեցաւ,
Մանուկ էի ես առաջ,
Ընկերներիս մէջ խիստ քաջ,
Ու Հայ աստա՜ն՝ ասելով,

---

*) Թէեւ այս բանաստեղծութիւն մի հմուտ գրչի գործ չէ, բայց մի ազգային պանպիտի եւ եռանդուն սրտի արգասիք լինելով աւաւել արժանի է ուշադրութեան ուստի նաեւ հրատարակութեան։

Այս առթիւ ստանոր կամինսկեմք հեղինակի յանուն խմբագրութեան ուղղած դրութենէն հետեւեալը։

,,Ներկայ ժամանակիս ուսման քաղցրալուր դանդաւի արձագանքն արեւմուտքից դէպ ի աշխարհիս չորս կողմն իւր գոլութիւնն այնքան է տարածել, որ մինչեւ անգամ կարողացեր է մեզ էլ պարսից կիզմանի մէջ գարթուցանել, ու այնքան բորբոքել իւր սէրն մեր սրտերումը, որ հրապուրած է մեզ մինչեւ անգամ քանաստեղծական գրուածքների ձգտելոյ, այնքան արծարծեր է իւր կիզանոյ քաջն որ մինչեւ Զարկարենից էլ է վառեր։ ուրախ եմք այո՛ որ ներկայ գարս սգներ է Զարկարեն էլ՝ որ հրապարակ է գալոս գալիս գրաւոր Հանդէսների մէջ, եւ կարծեմ որ Ազգն պիտէ մասամբ իւրք սիրտ ուրախ լինի իւր Զարկար բանաստեղծի մտաց փորրագի ծնունդոցը վերոյ, եւ ներեւի է կարծեմ նորան, քանզի եւ նորանից աւելի չկինիր պահանջել. ընդունելն թէպ նորա երկասիրութիւնքն իբրեւ անատատական ծաղիկներ իմէջ վերոյ գրուսեալ յատուկ ժամ, չունի հոտ եւ գոյն մեր գրուածներեն, միայն մի նորութիւն Հայ Ազգին համար նոցա ի թէհրանէն գալոս գալն պիտի համարուի, որը կը յուսացուի որ Արարատի մէջ մտնելով՝ մի նոր խրոխտոյս կսրոյ են տալ աւ աւաւելս բորբոքելոյ զմեր սէրն ի ծոցի։

Ընդունելեք խնդրեմ այս իմ երկասիրութիւնքը՝ որ պարսկաստանի խորէն աւ Ջեզ եմ յղուսմ, որ հրատարակութեան բաղդաւորութիւնն աւնենոյ։,,

Ա՛յլ Հայրենեաց փոխարէն,
Ո՛Հ Պարսկաստան զիս վարեն։
Արեգակն արդ մարեցաւ,
Սև ամպերով մուխ կոխաւ,
Մօր զըգուանքով ցարդ սընած
Սև օրերն է շուտ եկած։
Բնակէի Պարսից մէջ,
Ցաւերիս չէի լինուլ վերջ,
Տեւեց քըսան եօթ տարի,
Չի տեսի միւն օր բարի։
Ցանկարծ բազդիս լինձ սիրեց,
Մեզ Թէհրանէն դուրս բերեց,
Տարաւ ուղիղ ի Դաւրէժ,
Տալով վշտերիս հրաժեշտ։

Բ.

Մին արշալոյս զեռ դիշեր,
Ապրիլ քսան և վեց էր։
Արշալուսի լոյս աղօտ
Երասխեն ոչացաս բերաւ մօտ։
Որ կայի ընդ կայի կ'վազէր,
Հանելով դուրս փրփուրներ,
Կարմիր կարմիր ալիքներ,
Միմիանց ետև կուզարկէր։
Երասխեն մենք անցկացանք,
Խոր Հայաստան ողջ կօտակք,
Որպէս պղտ սիրտ հարեալ,
Զուրկ ի սիրոյն մընացեալ . . . .
Իւր սիրելւոյն տեսնելով,
Կարօտութեան լնու սով։

Գ.

Ձեպեմք յուշիկ մենք յառաջ,
Ահա բազդիս իմ առաջ,
Ասաց կըտամ քեզ բարև,
Քեզ նոր օր և նոր արև։
Ինչպէս որ քեզ խոստացի,
Այնպէս մինչ աստ հանցուցի,
Գնա ման ես դու ինքնին,
Կսպասեմ աստ քո դարձին։
Արագ գնեց սայլապանն,
Հասոյց ի հին Նախջևան,
Ուր Հայրենեաց պանդխտին
Հայերն ի տես ժողովին։

Սէր ըզգայուն աղջկին,
Հիւրընկալ սիրոք մեզ տային,
Զոր անմոռաց կ'յիշեմ,
Քանի որ օդ ես չինչեմ։

Ե.

Երբ արշալոյս շողշողէր,
Զարթնոյց ի քնոյ զիս իմ սէր.
Ելի՛, ելի՛ քեզ ասեմ,
Այս ինչո՞ր է ես տեսանեմ։
Քաղցրալուր ձայնք զանգակաց,
Զօդ լնուին լուսազգեաց,
Եւ ահա մեր Երևան
Հայք Հայուհիք ամենայն։
Լեռն միամիտ, չէ Թէհրան,
Բարձրաձայն գոչէ Մուլլայն,
« Ալլահ ակբար » չէ ձայներ,
Էլ այնուհետ չիմք լըսեր։
Շփոթած ես վերկացայ,
Անծանօթ զամենն տեսայ.
Ուշադրութեամբ նայեցայ,
Ազատ Մասին բարձրակայ։
Ո՛վ Արարատ, իմոյ յոյս,
Թող քեղմէ ինձ ծագէ լոյս,
Շատ ժամանակ իմ աչքեր
Քո տեսութեան կարօտէր։
Ահա քո արև փայլի,
Սըրտիս մէջըն փարատի.
Մասի՛ս, դու մեծ յիշատակ,
Արդ Անին է հողի տակ։

Զ.

Սայլապանք ահա կկին.
Մեր սայլըն պատրաստեցին,
Ամենքեանս միասին
Գնացիմք սուրբ Էջմիածին։
Խուռն բազմութիւն կառքերով
Ամենայն կողմ՝ գընալով,
Խումբ խումբ մարդիկ և կանայք՝
Պտըտութեին վանորայք։
Գեղաշուք տեսակ տեսակ՝
Պերճ հանդերձով զարդարուած՝
Նախշուն լիմն զերթի սիրամարգ՝
Վանքի շուրջ էին պատած։

Պարսկաստանում եմ ծընած,
Այսպէս բաներ չըտեսած,
Ապուշ աչօք ըզմայլած,
Ականէի հրաշակաց։
Մի սուրբ հանդէս շատ պայծառ,
Կատարէ մեր Վեհափառ.
Ա՛խ, Տէր Աստուած, մեզ համար
Այն ի՞նչ օր և ինչ կեանք էր։
Այլ ասա՛ղ, զի իմիք անցան,
Քաղցր հիշատակ ինձ Թողան։
Խումբ ղենուօրաց փութացին,
Նուագարաններն հընչեցին։
Այր կին, աղքատ և իշխան
Վանքի բակում ըղցուցին.
Իրրև որդիք իւր ի սէր,
Վանքն ըղնոսա կերակրէր։
Ի մայրենի ջերմ գորով,
Զամենքըն գոհ անելով,
Պիրակի առաւօտ շուտ,
Այդ ինչ կանեն մարդոց կոյտ։
Սուրբ Մեռօնի Հանդէսին
Դիմեն ահա խիտասին.
Այո՛, ահա այս տեսակ
Ամբոխն ըղցոյց իւր փափաք։
Խիտ խիտ իրար այնպէս մօտ,
Կարելի չէր շարժել ոտ.
Ուր ես Տեառնէ մաղթեցի,
Որ իմ գործեր յաջողի։

Է.

Վեհափառ Հայրապետի
Տարեպարձն էր այն պիշեր,
Հրախաղութեամբ հաճելի
Ճրագներն կըփայլէր։
Գիւղացի աղջկունք, կանայք,
Ընդառնային պարերգակ.
Զօրականաց նուագարանք
Կըհնչէին ներդաշնակ։
Զանգակատան ճակատին
Տեսանէիր ինչքո գըրած,
Անուն և թագ պանծալին՝
Ճրագի լուսով դուրս կըած,

Ազգը նորա օրինակ
Ի սրտին մէջ Թող գրէ
Գոհարեղէն պըսակաւ
Ոսկի տառով զարդարէ։

Ը.

Ո՛վ Էջմիածին, մեր հետաւոր խարիսխ,
Դու ես Հայ ազգի յուսէն մի միակ յոյս,
Հայոց փառքէն դու ես մնացեր արդէն,
Ազգի համար միայն դու ես ապաւէն։
Հայոց Ազգն քեզմէ շատ յոյսեր ունի,
Որ իւր ցաւերին մէկ դեղ ճար լինի.
Ազգն բյուրերարէն պէտք է միշտ մաղթէ,
Հայրապետի սուրբ խորհրդոց նպաստէ։
Որ վարժարաններ մեզ համար կազմի,
Ապագայ բարեաց սերմերը ցանէ.
Բարեվիճամբ անցնի նորա օրերը,
Ձիկլտրի նորա կեանքի Թելերը։
Թէ որ Յաջորդքն ընդհատք չըշնորհեն,
Ճանապարհ մեզ սմին նըման յարդարեն,
Յոյսդ իմ յայնժամ լիր վըստահ կամարին
Ճոխ ազգաց պատուէն կառնուք մենք
բաժին։

Ը.

Մին առաւօտ շատ շուտ էր.
Ցունիս քըսան և չորս էր։
Ահա բացուեց դուռն մեր,
Որ մի կառք մեզ կըտանէր։
Հրաւիրէին մեզ նըստել,
Երջանիկ տեղէն հընել,
Թուն Հայրենեաց հետանալ,
Մեր Դավըէժին մնտնալ։
Գնայի՞ն աչքիս առջեւէն
Հայաստանի քաղաքներն,
Արագ արագ կանցնէին
Պարտէզ, դիւղ և դաշտեր։
Որքա՜շարժ Հոլոմներ
Էին անիւք կառքին մեր,
Որոց հետ էլ շըրջէին
Երջանկալի ուղերք իմ։
Նըկատէի զմայլած
Երասխի ծալ ծալ ալեաց,

Հողմն հակառակ ընդդէմ մեր,
Կարծես ըզմեզ կարգելէր.
Որով մնալ Հայաստան,
Նա մեզ սիրով կընդունէր.
Տըխուր դիմօք նայեցին,
Բաժանվելըս խմացին,
Մըտածէի ես ի խոր.
Ինձ կըմխրճէր մի երազ.
Սիրէի՞ մնալ Հայաստան,
Բայց գամ կրկին առ Երասխ,
Որոյ սուրբ ափանց Հողին
Ցանկան շըթունք Հայերին.
Ահա քեզմէ հեռանամ,
Դէպ ի Թէհրան ես գընամ,
Պարսից խոր անկիւններուն
Պէտք է յիշեմ քեզ սըրտմ.
Հեռուն մի ոմն կրձայնէր,
Տեսի որ իմ բաղդիկս էր.
— Հայաստանի ցանկացող,
Ինչի՞ դառնաս Պարսից Հողը
— Ասի, եղէ համբերես,
Սըրտիս ցաւը ասեմ քեզ,
Մի քիչ միջոց դու ինձ տաս,
Կըրկին դառնամ տեղըս այս,
Ոլոր ոլոր արտասունք
Իմ աչքերէս հոսէին,
Իմ Վաղարշակ, Մարիամն
Տըխուր ձայնով ասէին.
Ահա Երասխ, Հայր, տխրի՞ս,
Շուտ Հայրենիք կըհասնիս.

ԺԴ.

Ո՛վ իմ փոքրիկ դառնուկներ,
Դեռ չէք հրէք կարզացեր.
Հողն յորմէ արդ բաժանուիմք,
Նախնեաց մեր Հայրենիքն էր.
Ըզնաց մեզմէ նոր արև,
Տըէք վերջին ձեր բարև,
Հայոց Տիւգաղն մեծ քաջեր
Այս Հողոց մէջն են դըրուեր.
Վարդգոյն իւրեանց արիւնք
Ներկեցին զայս գետափունք,
Լանքմէ յմուռ և Շահ-Աբաս,
Հայոց ինչքո՛ր արեցին.

Ամենայն ազգ և կանայք
Գերի մինչ աստ հանցուցին,
Հայոց անմեղ դիակունք՝
Կամուրջ զարձան Երասխին.
Մինչ բարբարոս ժանտ վաշտեր
Այս հեգ կիրճէն անցուցին,
Ի Խուժաստան խոր ի խոր
Տարան դիւղեր լըցուցին.
Նոր Ջուղայի մօտերըն,
Փայրապատի պատերըն,
Հայոց արեամբք շաղախուած՝
Մինչ ցայսօր կան անդ կանգնած,
Ամեն նահատակ եղան.
Իւրեանց հաւատ չուրացան.

ԺԵ.

Մին լաւ ըըժիշկ Թէ լինէր,
Մեր սիրտեր բանար տեսնէր,
Խոշորացոյց գործիքով
Ըզգուշումեամբ որոնէր.
Նոցա ծալքից ի միջի
Պահվըտած հին հին ցաւեր,
Խոցուկքըն խորունկ վէրքով,
Մինչ դարմանէր իւր ձեռքով.
Մինչև շունչ մի մնիք ազատ՝
Առնէինք ցաւոց ազատ,
Մեզ ճար չիկայ քնաւ աստէն,
Պէտք է լինի վերուստէն.
Այս խոցերը մեզ բաւ չէ.
Բըժըշկապետն Թող նայէ.

ԺԶ.

Բաղդըս կայնած կընայէր,
Ասածներիս վրկայէր.
Գընաց մեզմէ նոր արև,
Որ տըւած էր մեզ լուսև.
Ասի, ըզքեզ պատանդ տամ,
Որ Հայրինիք դարձեալ գամ.
Եղև նա ինձ օգնական,
Մընաց իմ տեղ Հայաստան.
Խընդրեր որ՝ ես աշխատեմ,
Շուտով ընձա ազատեմ.
Մեր դաշինքըն վերջացաւ,
Եւ մեր պայման փակուեցաւ.

Մըտամբ ասպա նաւն անցամբ·
Դաւրէժու մօտ տեղ հասամբ·
Հայաստանի սիրարկուն
Հուտով դարձաւ ուհա տուն,
Ինքնիրենս այս ուխտեցի,
Դէպ ի Թէհրան չըւնցի·
Որ յետ դործս աւարտկոյ,
Բաղդիս վազիմ իրրկնկոյ·
Ա՛յլ որչափ ջան դրի ի գործ,
Ցաջողուածդ չառի փորձ·
Ցանկարծ մի օր միտքս նկաւ,
Որ բաղդս իմ հետ չէ քընաւ·
Մըտածէի երբ ի խորհ,
Տեսայ հեռուն քըրտնաթոր,
Երկու անձինք փաթըթուած,
Ձիրար կուղեն զարնել ցած·
Գոռում գոչում աղաղակ,
Երկնից եղած նըշաւակ,
Բաղդըս էր մէկն, իսկ միւս մէկ,
Հայաստանի ՈԳԻՆ հէգ·
Ընդծօք սրանց վէճն ի՛նչ է·
Ձիս ինմանէ պահանջէ·
Նորանք և զիս տեսնելով,
Դադարից վէճըն փուռով·
Բաղդըս գոչեց վառ ի խանդ,
Թէ չեմ այլ ես քո պատանդ,
Ահա որդիդ տարագնաց
Մկրտիչ Յակոբ Բըժըշկեանց·

1878 Ապրիլ 13
ի Թէհրան:

ԱԶԳԱՅԻՆ

Պ. ՄԱՏԹԷՈՍ ԵՐԵՑՓՈԽԵԱՆՑ·

Նոր - Նախիջեւանցի Մեծապատիւ Պ. Մատթէոս Խաչատուրեան Երեցփոխանց՝ ի պէտս եւ ի զարդ Աւագ Սեղանոյ Ս. Տաճարիս Էջմիածնի՝ երկու հարիւր ռուբլի արժողութեամբ՝ արծաթեայ՝ միջակադիր մի գեղեցիկ ջահ ընծայեց:

Կգովեմք յիշեալ աղնիւ մերազնէի բարեպաշտական եռանդը եւ խղճը ի պայծառութիւն Տան Տեառն, եւ հրապարակաւ կյայտնեմք մեր երախտագէտ զգացմանց հաւաստիքը:

ՊՆԱՐՈՆԱՑ ԴԱՒԻԹ ՊՕՊՈՎԵԱՆՑ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՊԱՇԵԱՆՑ·

Ստաւրապօլեցի Մեծ. Պ. Դաւիթ Բարդուղիմէոսեան Պօպովեանց՝ ներկայ տարիէն սկսեալ՝ եւ այժմէն յԱռաջ ընթ. Նուիրելով՝ (տարեկանն եւս յիսուն ռբլ. լինելով), եւ Եյսկեցի Մեծ. Պ. Մանուկ Թորոսեան Սուպաշեանց՝ յառաջակայ 1876 թուականէն սկսեալ՝ տարեկան չոռն Հինգ ռուբլի՝ ի նպաստ նորակառոյց Ձեմարանի Ս. Էջմիածնի ուխտած եւ խոստացած են յիւրաքանչիւր ամի յվերջին ջունջ կենացն՝ յիշեալ քանակութեամբք ընծայել տարեկան նուէրներ:

Ցիշատակեալ Ջերմեռանդ Հայազգեաց գովելի եւ բարենպատակ ուխտ եւ խոստմունքը հաղորդելով ի տեղեկութիւն եւ ի բարենախանձ ուրախութիւն մերազնեայց՝ նաեւ արժան կհամարիմք հրապարակաւ մեր խորին եւ երախտագիտական զգացմանց ի հաւաստիս՝ յատուկ շնորհակալութիւններ փոխարինել առ նոսա:

Ապրի՛ն յաւէտ այնպէս քարեսէր եւ ջերմեռանդ Հայերն:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿՈՆԴԱԿՔ

Ի բաւական ժամանակաց հետէ ամուսնական կենակցութեանց մէջ տեսնուած ինչ ինչ դէպքեր և խանգարումները Վ. Ս. Հ. Հայրապետի խորին ուշադրութեան ներքարկուելով՝ ինչպէս ի 1869 ամի, նոյնպէս ներկայ տարւոյս մէջ հետևեալ կոնդակաւ՝ առաջինն կոնդակը և կարգադրութիւնը ևս կցելով՝ յանուն Սինոդի առաջադրեց և պատուիրեց ամուսնութեան և նշանադրութեան համար կանխաւ պէտք եղած զգուշութիւնները և կարգադրութիւնները անօրինել։

Յիևան ամուսնական կենակցութեան տրամադրած նուիրական պարտաւորութիւնը ո՛րքան ծանրակշիռ և վսեմ են, նոյնչափ ևս կարևոր է կանխաւ ամեն նախազգուշութիւն և հնարաւոր ապահովութեան եղանակները մատնակարարել և գործադրել, և որովհետև նշանադրութե՛նէ ամուսնական կենաց նախապատրաստութիւն գլխաւոր կէտն է, պէտք է որ նոյն ժամանակէն և գործողութենէն սկսեալ ողջամիտ և ազատ պայմաններ միջոց տան երկուց նշանակելի երիտասարդաց (անձանց) զիրար ճանաչելով՝ ինքնայօժար հաւանութեամբ և անկեղծ սիրով ընդ միմեանս նշանուելոյ և պսակուելոյ՝ և ոչ թէ բռնութիւն ծնողաց կամաց դէրի կամ նոցա շահամոլութեան *) մի առարկայ դարձնելով՝ նիչպէս որ Հայաստանի շատ տեղեր դարձած կերևին, որով բռնութեամբ նշանակալքն և պսակակալքն չեն կարող երբեք սիրալծորդ ամոլներ լինել և ամուսնական օրինաւոր և խաղաղ կեանք վարել, ուստի և բազմիցս դառն հետևանքներ կծանին և կտեսնուին, և ահա այս ամենի առաջքը ըստ կարելոյն առնելոյ համար Վ. Հ. Հայրապետ հետևեալ կոնդակներով առ այժմ պէտք եղածը կարգադրել առած է, զորս պարտք կըհամարիմք հաղորդել նաև ի տեղեկութիւն և ի զգուշութիւն սիրելի և Հայկազուն եղբարց մերոց։

Ընդ ամուսնական խնդրոյ վերայ ի պահ ժամու առանձին մի յօդուած կհրատարակուի։

Ե՛հաւասիկ կոնդակներն։

ՊԱՊԻՆ ԿՈՆԴԱԿԸ Վ. Հ. Հայրապետի
ՅԱՆՈՒՆ ՍԻՆՈԴԻ Ի 4ԷՆ ՅՈՒՆԻՍ 1875 ԱՄԻ
ՈՒՅԻՂ, ԸՆԴ ՀԱՄԱՐ 179։

Ապաքէն քաջայայտ պարտի լինել ամենից, զի միւն ի գլխաւորագոյն անտի էական պայմանաց յարատևութեան մարդկային սեռի և իւրաքանչիւր ազգի առանձինն՝ համարի իրաւամբ բնական և Աստուածային օրէնք սակս ամուսնական կապակցութեան առն և կնոջ ընդ միմեանս, և ի

(*) Պաշտօն կամ պաշտք անուամբ եկեղ, կու վերս ևըն, կամ 50 էն ց100 և աւելի որը դրամներ ստանալով մնասացուէն, որ օտարամուտ մի տարօրինակ սովորութիւն է՝ և ինչպէս թերթերն ևս լինկէն ևս, կհասկացուի՝ զի թուրքերէն և քրտերէն անծանօթացած մի սովորութիւն է։

Ի տեղիս տեղիս պաշտօն անուամբ մի սովորութիւն ևս կայ, որ ի զարդ ճակատու հարսնացուին՝ մի ոսկեշղթ (մի դրձանի կամ նեղ ժապաւեն վերայ շարուած քիչ կամ շատ ոսկիներ) կըտան և պաշտք կասեն՝ թէ և բառական բուն նշանակութեամբը գնահատ կամ գնաչէն և կամ գնաչարք է։

սոցին սիրալիր միաբանութենէն, յանխռով կեանակցութենէն և իբաղ իմացողութենէն զըրազան պարտս ամուսնութեան՝ առաջնովիսալ Հաստատի յաւէտ ցանկալին խաղաղութիւն յանձնիւր գերդաստանի և տայ Ճոխանալ նիւթական և բարոյական ամենատեսակ լիութեամբք. ուստի առ պնվըէպ հասանելոյ բարոյական վախճանի ամուսնութեան՝ հարկ ի վերայ կայ զի լիցի այն իւրաքանչիւրոցն կամաց ազատութեամբ և կատարեալ հաւանութեամբ, առանց ստիպողական ինչ միջոցաց ի կողմանէ ազգականաց և այլոց. քանզի որ բռնութեամբ կատարի արտաքոյ գոլով բնական կարգի օրինաց, ոչ կարէ բնաւ ժամանել իւրումն նպատակի։

Սորին վասն ահաւասիկ երանաշնորհ Առաքեալք և Հայրապետք Սրբոյ Եկեղեցւոյ ուսեալ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ ըզհին օրինաց զղաշն կապակցութեան առն և կնոջ իմաստութեամբ բարձրացուցին ի կարդ սրբազան խորհրդոց Եկեղեցւոյ՝ անլուծանելի հրամայեալ զկապն ամուսնութեան ցմահ ամուսնակցացն ըստ Տէրունեան բանին թէ, «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»։ որում պատկառեալոց ի գարաւոր ժամանակաց հետէ Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցի, գիտելով քաջ զիմաստութիւն և զարգարութիւն Քրիստոսադիր պատուիրանին՝ և զանցառութեանն որ անտի զբազմանալեսս հետեւանս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բարեկենդանութեան։ Եւ թէպէտ յառաջ քան զմեր գահակալութիւն պատահեալ են օրինակք ինչ բաժանման միոյն յամուսնացելոց առ ընկերին կենդանութեամբ, բայց գիտել պարտ է, զի նախ քան զայնս՝ Աղգի մերում իկողմանէ Եկեղեցական Պաշտօնէից Սուրբ Եկեղեցւոյս գոգցես բռնաւին երբէք չէր թոյլատրեալ ումեք եղծումն կանոնի միութեան բարոյական անձնաւորութեան ամուսնացելոց։ Եւ պատճառ մեղանչելոյ ընդդէմ նուիրական կանոնիս այսորիկ անշուշտ այն է, զի ոչ հանապազ՝ որպէս հարկն պահանջէ՝ ըստ օրինի լիակատար ազատութեամբ կամաց իւրաքանչիւրոց և կողմանց գործադրի խորհուրդն պսակի առանց կանխաւ օրինաւոր նշանագրութեան, յորմէ բնականապէս յառաջ գան յետ ամուսնութեան կատարման՝ տրտունջք և անմիաբանութեան գառն արգասիք յընտանեկան կենցաղավարութեան, որով փոխանակ երջանկութեան՝ ամուսնութեանն կապ գառնայ յաղբիւր արտասուաց և պէսպէս տարաբաղտութեանց։ Հարկ իցէ արդեօք աստէն նշանակել զայլ բազմապատիկ զանցառութիւնս որք գաղտագողի և յանխորհուրդ կատարին ի տեղիս տեղիս՝ նկատմամբ հպատակի, աւազդութեան, արհեստակցութեան և այլոց բարոյական կատարելութեանց՝ որոց միանգամ յամուսնութիւն մտանել յօժարիցին. յորս սակս ազգաշէնս հետեւանացն օր ըստ օրէ յաճախեալ՝ սպառնն ըզֆիզիզական բարօրութիւն սիրելեաց որդւոցս Հայաստանի։

Եւ արդ՝ զուն գործելով մեր ըստ Սրբազան պարտուց Հայրապետական պաշտամանս մերոյ՝ հայածապահ լինել սրբազան կարգաց և կանոնաց Հայաստանեայցս Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ՝ և ընդ նմին ոչ գտանիլ անփոյթ ի խնամս մատակարարելոյ ի Տեառնէ հաւատացեալ մեզ Հօտին զհարկաւոր առիթս բարոյական և ֆիզիկական վերակենդանութեան զոյգ ընդ մտաւորականին զարգացման՝ կարևոր յոյժ համարիմք ընդ ձեռն Սինօդիդ դարձուցանել ըզխորին ուշադրութիւն Գերապատիւ Առաջնորդաց և Ցաջորդաց ի վերայ այսր մեծի և սրբազան խորհրդոյ ամուսնութեան՝ իբրև ի վերոյ անլուծանելի շաղկապի խաղաղ և անդորր կենակցութեան առն և կնոջ մինչև ցվախճան կեանց նոցին. և ըստ այնմ ընդ ձեռն նոցին պարտաւորել զամենայն քահանայս և զհոգևոր իշխանութիւնս՝ որ ընդ տեսչութեամբ Թեմական և Հոգևոր կառավարութեանց գտանին՝ յանվրէպ

Կան տեղեր ևս որ՝ բաց ի օժիտէ՝ հարսնացուին կողմէն բաւական ընծաներ կամ կալուածք և կամ դրամ կտրուի փեսացուին, և այս սովորութիւնը առաւել կամ նուազ քաղաքակրթեալ տեղերում և կողմերում անգամ ընդհանրանալ սկսած է, որոյ դէմ պէտք եղածը կանօրինուի ի ժամանակին։

կատարումն յետագայ կանոնաց ըստ հետևեալ բանաւոր պատճառաց՝ ի գիւտ ամուսնական երջանկութեան և ազգային բարեկեցութեան. Եւ նախ՝ քանզի իմիտ առցեն քահանայք և ժողովուրդք զի ամուսնութիւնն է առն և կնոջ ընկերակցական անվախճան միաւորութիւն ազատութեամբ և հաւանութեամբ երկոցունց եղեալ, զոր միայն մահն կարէ լուծանել: Ապա ուրեմն ի ժամ նշանագրութեան, որ խորհրդաւոր մասն համարի առաջակայ ամուսնութեան՝ ուշ կալցի խոստովանահայր քահանայն այնմ՝ թէ՝ արդարև յօժարակիտ սիրով և ազատ կամօք ցանկան ընկերակցութեան հարանացուն և փեսայացուն եթէ յոչ կամաց կամ՝ յարտաքին տիպողական ինչ պատճառաց՝ այլ բերեալ իցեն զանութեամբ: Երկրորդ՝ առ քանզ ըմբռնումն բարոյական խորհրդոյ ամուսնութեան՝ ընկերակցական երջանկութեան և առանին խաղաղութեան՝ պարտ է ցանկացողացն ամուսնութեան լինել չափահաս. վասն որոյ քահանայից է գործ՝ խնամ ունել կատարեալ չափահասութեան պսակելեացն. քանզի անչափահասութիւնն խանգարման լինի պատճառ բնութեանն կարգի և օրինաց: Երրորդ՝ վախճան ամուսնութեան գոլով միանգամայն լուսն յաւիտենական կամաց Արարչին, որ ասաց, «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր», ապա ուրեմն հաւասարապէս պարտք են և՛ քահանայից և՛ ժողովրդոց, այն՝ ծնողաց հարսին և փեսային՝ անաչառ մտօք ի նկատի ունել զպայման առողջութեան երկոցունց ևս կողմանց առ խափանելոյ զպատճառ ստգտանաց պսակելեացն յապագային և տարաբաղտութեան յամբողջ ընթացս կենաց միոյն կամ միւսոյն. ըստ որում անլուծանելի է պսակն մինչև ցմահ միաբան կենակցութեամբ: Եւ չորրորդ՝ Հայաստանեայցս սուրբ Եկեղեցի իրաւամբ և արդարութեամբ արգելու զամուսնութիւն արենակցաց և մերձաւոր ազգականաց, քանզի և ըստ ֆիզիկական պայմանաց առողջութեան իմնաս յոյժ հաւարթ ապագայ որդոց և սերնդոց նոցա:

Գործադրութեամբ չորեցունց այսոցիկ Եկեղեցական Կանոնաց խնամով և ճշդութեամբ, յորս պարունակին այլ ևս առանձին կանոնք փոխադարձ պարտուց ամուսնացելոցն ընդ միմիանս՝ հրնար է զաւաչըս առնուլ բազմատեսակ արկածից ամուսնական և ընկերական հաշտառութեան, յորում բազումք ի ներկայումս տագնապին և օր քան զօր բազմանան կարօտ, տկար, թափուր յառաքինութենէ և յառաքինական գործոց ընտանիք նաև ի մերումս Ազգի, և իրրու թէ ոչ համարելով բաւական զառիթս հաշտառութեան և մեղաց, որոյ հինքեանք հինքեանց տուեալ են պատճառս անհնատեսութեամբ ըմբռնեալ նորասիրութեան ախտիւ, հետամուտ լինին ի ձեռս բերել զայն՝ որ Հայաստանեայցս Եկեղեցւոյ վարդապետութեամբ և բնութեան ճշմարիտ օրինօք՝ իրաւամբ է խափանեալ, այն է՝ լուծումն պսակի, որ ըստ ամենայնի սուրբ է և անլուծանելի. Ապաքէն ոչ ինչ զօրեսցեն ստանալ կանոնաց Սուրբ Եկեղեցւոյս անօրինացն վարք և ընթացք, որք բաժանել նկրտեն ի միմիանց թևլագրութեամբ տպականալ բարուց իւրեանց, և քաղցր այն է՝ զի որք տարաշխարհիկ կեանս վարեն վատութեամբ և անառակութեամբ, թերևս անգէտ գոլով այնմ՝ զի Եկեղեցին՝ որ ըզկապն ամուսնութեան անլուծանելի քարոզէ նոյն Եկեղեցին ոչ չգտարեսցէ ի քարոզելոյ նաև զաստուածային այժանահաս պատիժս աստ և ի հանդերձեալսն, որ հասանելոցն է իվերայ պղծողաց զհրիատոսադիր օրէնս ամուսնութեան:

Զայսոսիկ ամենայն միջոցաւ Սինոդիդ յուշ ածելով Գերապատիւ Առաջնորդաց և Ցաջորդաց՝ և ընդ ձեռն նոցա՝ ամենայն քահանայից և ժողովրդոց՝ կամիմք լիապես լինել, զի ոչ պակասեսցին առ ի նոցունց կողմանէ եռանդուն քանք փութով և յօժարամտութեան առ արդիւնաւորելոյ զանթերի կատարումն այսոցիկ բարոյական սկզբանց ի վիճակս վիճակս՝ ի գործ արկանելով և զքարոզութեան համազգական միջոց և խրատս և ազդարարութիւնս ի ժողովրդեան. քանզի որ հայի յօգուտ ընդհանուր Ազգի՝ անպատիւր պահպանութեան կանոնաց Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայցս, այն պարտի քաղցր և ախորժելի իմն պարտք համարիլ ամենեցուն, եկեղեցականաց և աշխարհականաց միանգամայն, ի լուսն Աստուածային կամաց, որով մարդն վասն ընկերական վիճակի երջանկութեան ստեղծաւ և Պսակն ի Տեառնէ մերմէ Քրիստոսէ անլուծանելի քարոզեցաւ. Կարևրո յոյժ

Ի 1869 թուականին տուեալ Կոնդակի և նշանադրութեան կարգադրութեան պատճէնքն ևս հետևեալներն են։

Իքննելն մեր ըստ պարտուց Հայրապետական պաշտաման կկարգս և կկանոնս երանելոյ Նախնեացն մերոց՝ գտանելով զայն հաստատեալս յուղղութիւն Քրիստոնէական սուրբ Հաւատոյ մերոյ և բարեկարգ վարուց մերս Եկեղեցւոյ, Քանզի նախանձք մեր ձեռն իգործ արկին կարգաւորել զնկեղեցին ըստ Աստուածային աւանդութեանց և օրինացն և զայս միայն կալան նպատակ ղի յամենայնի ճշմարտութիւն Դրօնի բացայայտ երևեսցի, այլ նաև առիթք անկարգութեանց, որք զհետ բերին զլանգարութեամբ բարոյական սրբութեան ղինուորեալ Եկեղեցւոյ բարձցին ի միջոյ և սէր և խաղաղութիւն թագաւորեսցէ ի ժողովրդեան։

Սին յայսպիսի կարգաւորութեանց ճանաչի և կարգադրութիւն նշանադրութեան. զի որք միաւորիլ կամիցին սոսրբ ամուսնութեամբ, կայսն և երիտասարդն, նախապէս յայտնեսցեն զհաւանութիւն և զճաճանչիւնս իւրեանց առաջի դասուց եկեղեցւոյն, և այս ոչ վայրապար, այլ կարի իմն խորհրդական օրինաւորութեամբ. որպէս զի դիտասցեն ամենեքեան զհամահաճ կամեցողութիւն նոցա առ միմեանս և ճիշդ խոհ զարկութեամբ հասու լինիցին ամենայն հանգամանաց, եթէ օրինաւոր իցէ և ներելի՞ն արդեօք օրէնք և պատուիրանք քրիստոսական եկեղեցւոյ կատարել զամուսնութիւնն զնորհուրդ և չկամ ի նոսա մերձաւոր ինչ հոգևոր կամ մարմնաւոր աղգականութիւն։

Եւ այս սահմանեցաք՝ զի մի՛ յանպէտս ժողովուրդք մեր հակառակ Եկեղեցական օրինաց խոտսեալք զլանամութիւն՝ մերկեսցեն, և իժամ հարսնացուաց իյայտ եկեալ մերձաւորք՝ խառնակութեանց նոցա և զեղծմանց բարեկարգութեանց եկեղեցւոյ լինիցին պատճառք։

Արդ՝ ցաւիմք յոյժ, զի զբարեպատակ և ըստ սուրբ սովորութիւնս զայս տեսանիմք ի ժամանակիս յայսմիկ փոխարկեալ յանկարգ սովորութիւնս. որով առանց յայտնելոյ եկեղեցական իշխանութեան և առանց կանխաւ վերահասու լինելոյ օրինաւորութեան և ապօրինաւորութեան համարիմք յաւելուլ և զայն, զի վասն նշանադրութեան ամենայն արդէն սահմանեալ է մեր զկարգ և զկանոն տպագրեալ Կոնդակաւ մերով յամին 1869 և ընդ ձեռն Փոխ՝—Թեմակալին Երևանայ և Ճառընդաց Աղեքսանդրապօլոյ՝ Նախիջևանու և Տաթեւոյ՝ ևս և Գործակալութեանց Էջմիածնայ՝ Երևանայ և Նոր-Պայազիտոյ գաւառաց արդէն տարածեալ է ի նոսա սահմանադրեալն առ ի մէնջ. կարգ նշանադրութեան։ Իսկ վասն մնացեալ վիճակաց պատուիրեմք Սինոդիդ փութով առաքել ի տպագրեալ Կոնդակացն յայնցանէ յԻւրաքանչիւր Թեմական Առեանս Հայոց Ռուսաստանեայց Թերթս 100ական, բաց յԵրևանայ վիճակէն,—յորում արդէն եղեալ է պատշաճականն կարգադրութիւն՝—և յԱլբազեղն՝—որոյ Գերապատիւ Առաջնորդն առաջն ընկալեալ է ըստ չափու կարեւորութեանն Թերթս՝ և ըստ այնոցիկ կարգադրեալ է վարել ամենայն գործակալաց վիճակին։—Ընդ Թերթն ղայնոսիկ հասուցանել առ իւրաքանչիւր Գործակալս վիճակաց Թեմական Առենից է գործ, պատուիրելով նոցա յայսմ հետէ ըստ այնմ հնդրահանգութեան վարել ի ժամ նշանադրութեան։ Ընդ նմին Սինոդն պարտի պատուիրել յատկապէս Թեմական Առենից և Հոգևոր Կառավարութեանց, զի տացեն ամենայն գործակալաց գտումար վասն արձանագրելոյ ի նմա զնշանադրութիւն ըստ ամենայն հանգամանաց, որպէս տեսանի յօրինակին որ ընդ սմին առաքի։ և ապա յետ լըման որոշեալ միջոցի նշանադրութեան՝ շընորհել զհրաման Պսակի ըստ սահմանեալն կարգի՝ համարիլով անվաւեր զայնոսիկ Հարսնախօսութիւնս՝ յորս չիցեն պահեալ ծնողք կամ պսակիլի անձինք զայս կարգ՝ յօդուտ ինքեանց՝ և չեն գնացեալ ի նշանակեալ կեդրոնատեղիս և արձանագրեալ ի Տումարին զանուանս փեսայացուին և հարսնացուին ամենայն հանգամանօք հանդերձ ծանօթութեամբք զհաճութենէ նոցին և զհաւանութենէ առ իմիսանել ազատ կամօք յառաջադրեալն ամուսնութիւն, պահպանելով զգաւառական իմաստ նաև վերոյիշեալ չորեցունց կանոնաց որ ի սմա։ և զգործադրութենէ կանոնաց նշանադրութեան յամենայն ամի ստանալ զտեղեկութիւն ի Թեմական Առենից և ի Հոգևոր կառավարութեանց։

առաջիկայ ամուսնութեան, առնեն զնամութիւնս և զպատրաստութիւնս հարսանեաց, և ոչ սակաւ ժամանակ աշխատ առնելով զեկեղեցական Իշխանութիւնն։ Զի յորժամ ըստ չներելոյ կանոնացն եկեղեցւոյ Հարկադրի Հոգևոր Իշխանութիւնն արձակել զամուսնութիւն այնպիսեացն, խառնութիւնք և անպատեհութիւնք ոչ սակաւ յառաջ գան ի նախատինս սրբութեան եկեղեցւոյ և չընդվզայր աշխատութիւն այնոցիկ՝ որք զհետ լինին յօրինաւորութիւնս մուծանել զեղեալն ապօրինաւորութիւն։

Արդ՝ մեք ընտրեալ գտալով ի Հոգւոյն սրբոյ վրաւակացու լինել ամենայն ուղղութեան կարգաց և պաշտպան օրինաց եկեղեցւոյ, ըստ սրբազան պարտաւորութեան մերում՝ անհրաժարելի հարկ համարեցաք՝ առ ի բառնալ ի միջոյ զչարիսն, որք յառաջ գալ կարեն յապօրինի ամուսնութեանց, մերով այսու Հայրապետական Կոնդակաւ հրատարակել վերոյիշեալ զկարգ նշանադրութեան համաձայն նախնի կարգաց Սրբոց Հարց Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ ի գիտութիւն ամենայն Ազգիս Հայոց, և պատուիրել յանուն Աստուծոյ՝ ամենայն Առաքելոցդ և Հոգևոր Առնեից՝ Հնկել արթնութեամբ անթերի կատարման ի սմին նշանակեալ կանոնաց։

Ցանկալի էր մեզ սահմանել՝ զի ուր նշանելիքն իցեն, անդ և նշանադրութիւն լինիցի. բայց քանզի ինչ ինչ պատճառք վնասակարք գտան մեր ժամանակիս, վասն որոյ առայժմ առ պիտութիւն ժողովրդոց մերոց և կարգադրութեանս յօրինաւոր կատարումն՝ արժան դատեցաք զկեդրոնատեղիս նշանադրութեան սահմանել կիսով և կամ միով ժամու հեռաւորութեամբ իշխողական տեղեաց՝ նշանակելով անդ զերկուս անձինս՝ միոյն ի քահանայից Գործակալ անուամբ՝ և միւսն յաշխարհականաց Գանձապետ անուամբ, և զիւրաքանչիւրոցն զպարտաւորութիւն և զպաշտօն նշանակեմք ի գիտութիւն նոցա և ամենեցուն։

ՊԱՇՏՕՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՔԱՀԱՆԱՅԻ

Գործակալ քահանայի պաշտօնն է յեկեղեցւոյ ի նշանադրութիւն տեղեկանալ ընդ Գանձապետի թէ երկոքին՝ այս ինքն տղայն եւ աղջիկն հաւանի իցեն միմեանց, թէ քանի ամաց իցէ տղայն եւ քանի ամաց աղջիկն, կամ չափահասք իցեն, թէ չիցեն ի միջի մերձաւոր ազգականութիւն կամ խնամութիւն, կամ կնքահայրութիւն եւ կամ այլ ինչ արգելք, թէ հաճեալ իցեն ծնողքն նոցա ամուսնութեան եւ երբ ունին առնել զհարսանիսն, եւ թէ լինին երաշխաւոր կամ վկայ՝ եթէ չիք այլ ինչ արգելք օրինականք եւ այլն։

Երկրորդ պաշտօն Գործակալի է, յետ ընդունելոյ Գանձապետի զհոգեբաժիճ անուանեալ նուէրս, դրել առ ծխական քահանայս հանգուցելոյ կատարել զեօթ նօրեայ կարգն։

ՊԱՇՏՕՆ ԳԱՆՁԱՊԵՏԻ

Պաշտօն Գանձապետի է նախ՝ յաւուրս նշանադրութեան անպատճառ ներկայ գտանիլ իսեռնակի եկեղեցւոյ ընդ Գործակալ քահանային, եւ իմիասին քննել զպարագայս նշանադրութեան։ Երկրորդ՝ ընդունել զհոգեբաժիճ արդիւնս ի հարսանեաց եւ զհոգեբաժիճ ի տնէցելոց՝ եւ դրել ի ժապաւէնեակ տուամբս ամենայն հաւատարմութեամբ։ Երրորդ՝ յիւրաքանչիւր ամիս զգոյացեալ գումարն հասուցանել ի Սիմէոնն յատուկ թուղթով։

ԿԱՆՈՆՔ ՆՇԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ա) Նախ քան զնշանադրութիւնն հարկ է ծնողաց կամ ազգականաց նշանելեաց յայտնել ծխական քահանային զդիտաւորութիւնս իւրեանց։ Ցորոց իւրաքանչիւրն պարտի երթալ առ խոստովանողիս իւրեանց՝ այս ինքն՝ քահանայ աղջկան առ աղջկին, եւ քահանայ տղային առ փեսայացուն, եւ առանձինն լսել ի բերանոյ նոցին զիւատարեալ հաւանութիւն իւրեանց ի մտանել յամուսնութիւն։ Եւ ապա ժողովեալ քահանայից իմի վայր ընդ մերձաւոր ազգականաց նոցա պարտին քննել թէ՝ չիցեն արգելք ինչ օրինաւորք վասն նշանադրութեան։ Եւ յետ քննելոյն եթէ արգարեւ չգտանիցին պատճառք յապաղանաց՝ պատրաստեսցին գնալ ի կեդրոնատեղին առ Գործակալն եւ Գանձապետն ի նշանադրութիւն։

բ) Նշանն պարտի լինել նուիրմամբ միոյ մատանւոյ եւ եթէ իկողմանէ փեսայացուին առ հարսնացուն։

գ) Յետ քննելոյ ծխատէր քահանային եւ իմանալոյ զհաւանութիւն նոցա յամուսնանալ, առեալ զմատանին եւ անձինս երկու երկու ի մերձաւոր ազգականաց տղային եւ աղջկան՝ ի սահմանեալ աւուրս նշանադրութեան դնայցեն առ Գործակալն եւ Գանձապետն դնել զնշանն։

դ) Ժամանակ նշանադրութեան են ամենայն Ուրբաթ աւուրք, յորս պարտին Գործակալն եւ Գանձապետն պատրաստ գտանել իսեռնակ եկեղեցւոյն՝ ունելով զտումար նշանադրութեան առ ի նշանակել ի նմին զանուանս նշանելեացն։

ե) Նշանակեալ Գործակալն ընդ Գանձապետին ի լսելն ի բերանոյ ներկայից զբան նշանադրութեան, պարտին նախապէս զգուշաւոր եղանակաւ հարց եւ փորձ առնել ծխական քահանայից եւ ներկայիցն ըստ նշանակելոյն. եւ եթէ համաձայն իցեն օրինաց տուեալ վկայութիւնք նոցին, եւ չիք ինչ արգելք եկեղեցական, Գործակալ քահանայն առեալ զմատեանն ի ձեռանէ քահանայի տղային տայ քահանային հարսնացուին տանել ի տուն աղջկան ի հաստատութիւն նշանեալ լինելոյ նորա, յետ որոյ արձանագրեն անուանք նշանելեաց ի յատկացեալ տումարի այսպէս՝

„ (Աբամ Հայկեան) ի հասակի (տան Եղիա)
„ առեալ նշանեցաւ ընդ (Զաղկայ Սիմոնեան) դուս-
„ տերն (Աբամայ Թորգոմեան), կոյս ընդ կուսի
„ (կամ այրի ընդ այրւոյ)„:

Ի վերջոյ պարտին ստորագրել քահանայք եւ եկեալ վկայք, եւ նշանակել զմիջոցն հարսանեաց: Համար արձանագրութեան պարտ է տալ քահանայի փեսայացուին առ իսահել առ ինքն, զի ի հատուցանել զաբոռահասն հարսանեաց՝ յիւրումն ժամանակի ներկայացուցէ զայն Գանձապետին ի դիւրութիւն գտանելոյ ի տումարի զտեղին, եւ նշանակել այսպէս թէ „պսակեցաւ ի (20 Փետրվարի 1875)„:

զ) Միջոց հարսանեաց յօրէ նշանադրութեան սահմանեալ է մինչեւ ցվեց ամիս. իսկ եթէ պատահեսցին արդելք ինչ, մարթ է ընդարձակել զմիջոցն յետ քննելոյ զօրինաւորութիւն պատճառաց երկարաձգութեան:

է) Եթէ նշանեալն ոք համարձակեսցի յետս կոչել ըզնշանադրութիւնն, պարտի դիմել առ Առաջնորդն եւ կամ առ ցաջորդն. եւ եթէ իցեն պատճառք օրինաւորք եւ անհրաժեշտ իմն տեսանի քակել զնշանադրութիւն, հաճել զկամն խնդրատուին՝ առնելով ի նմանէ նուէրս յօգուտ որբոց եւ այրեաց, ուսուցչարանի եւ եկեղեցւոյ այնր տեղւոյ, եւ արձանագրել ի տումարի, ազդ առնելով միանգամայն առ Գործակալ եւ Գանձապետ կենդրոնատեղւոյն առ ի ջնջել զանուանս նշանելոյ ի տումարէ նշանատուութեան՝ յայտնելով զպատճառն յետս լինելոյ նշանադրութեան:

ը) Բաց ի յիշեալ նշանէն արգելեալ է ինշանադրութեանն տալ սկզբ եւս ինչ յերկոցունց կողմանց մինչեւ ցօր հարսանեաց. եւ եթէ հակառակ հրամանի եւ պատուիրանաց մերոց առնիցեն եւ ի յայտ գայցեն մեղանքն, նուիրեալ ինչք դարձցին ի նպաստ որբոց այրեաց, եւ ես չունիցի իրաւունք պահանջելոյ զայնս ի միմեանց:

թ) Թեմակալ Առաջնորդք փոյթ տարցեն խափանելոյ զշռայլ ծախս ի նշանադրութեան եւ ի հանդէս հարսանեաց, եւս եւ չբաւէ անուանեալ պատճառն՝ որ սովորութիւն եղեալ է ի գիւղօրայս գանձն այս ամենայն ոչ միայն ի վնաս են նիւթականապէս աղքատաց, այլ բազում այն է՝ զի զհետ բերեն խռովութիւնս եւ պատճառեն զբակտումն հաստատեալ նշանին:

ժ) Ի մերձենալ աւուրցն հարսանեաց՝ վեց կամ չորս աւուրբք յառաջագոյն ծխական քահանայքն պատրաստեն զվկայական հրամանի հարսնեաց եւ ստորագրեն ի նմին ինքեանք եւ երեցփոխան գիւղին. Յետոյ քահանայն ընդ հօր փեսացուին կամ ընդ միոյ մերձաւոր աղգականի նորին առեալ ընդ իւրեանս զհամար արձանագրութեան նշանին գնանս առ Գանձապետն ի վճարել զԱբոռահաս իրաւունս եւ ընդունել զԱնդորրագիր ինմանէ:

ՕՐԻՆԱԿ ՎԿԱՅԱԿԱՆԻ

Ի ժողովրդենէ Հայոց (Կաթոլիկէ) գեղջ (Աբամ Հայկեան) նշանեալ ընդ (Թաթոսեան Աշոտեան) կոյս ընդ կուսի, (եւ կամ այրի ընդ այրւոյ), կասին ամուսնանալ ընդ միմեանս ըստ համահաւ յոժարութեան իւրեանց. առ այս չլինելով արգելք ինչ յեկեղեցական օրէնս՝ ստորագրեմք:

Քհնյ. փեսացուի.
(Գաբէթէլ Տահանայ Վարդանեան)
Քհնյ. հարսնացուի.
(Հմայեակ Տահանայ Ադօմեան)
Երեցփոխան
(Ղևոնդ Աբրահամեան):

ժա) Քահանայք եթէ առանց գիտութեան Գանձապետի եւ չընկալեալ տակաւին ի նմանէ զԱնդորրագիրն վերադիտեալ՝ յանդգնիցեն կատարել զպսակն, ընդ պատժոյ եւ ընդ տուգանաւոր ենթարկին:

ՕՐԻՆԱԿ ԱՆԴՈՐՐԱԳՐԻ ԳԱՆՁԱՊԵՏԻ

(Ահակ Ներսիսեան) որ կալի ամուսնանալ ընդ (Սերոբեան Սերոբեան) կոյս ընդ կուսի, վճարեաց զԱբոռահաս իրաւունս հարսանեաց (տան) դուքիս:

Գանձապետ (Վահան Աբրահամեան):

Արդ զայս ամենայն նախնական բարեկարգութիւնս վերոյիշեալ՝ յայտնի իսկ է զի բարձեալ է իմիջոց Բարեկարգչութեանդ անուն որոց յանձնեալ գոլով ցարդ վիճակային կառավարութիւնն անուամբ ևեթ՝ ոչինչ արդիւնս և օգուտս ընծայէր բարեկարգութեան եկեղեցւոյ

թողուլ զբարեկարգութիւնն եկեղեցւոյ և այլոց վարել Առաջնորդաց-անձամբ անձին, որոց սեպուհ պարտաւորութիւն է յամենայնի ինամ տանել ըստ Առաւածոյ տնտեսութեան։

Եւ մեք աղօթս առնեմք՝ զի ամենեքին լցին ի շինութեան և ի պայծառութեան՝ իշխաս միոյն Առաւածոյ և իպարծանս Ազգիս։,,

Ի ՆՈՐ ՋՈՒՂԱՑԻ

Ներկայ տարւոյս Յունիս 3 ամսաթուով Նոր-Ջուղայու Ամենափրկչեան վանքին՝ Առաջնորդական փոխանորդ Երժ. Խաչատուր վարդապետ Կարապետեանի յանուն վ. Հ. Հայրապետի ուղղած գրութենէն հետևեալ պարբերութիւնը քաղել և մերաղնէից հաղորդել արժան և կարևոր կհամարիմք։

Թէև գրութեան մէջ յիշուած որոգայթներն և ի տարածումն բողոքականութեան օտարաց չանքերն կանխաւ քաջայայտ եղած են վ. Հ. Հայրապետի մեծ բուժ, զորս առաւել ընդարձակ տեղեկացրած է Գ-ին. Գրիգորիս Երքեպիսկոպոս Յովհաննէսեան, և արդէն (1872-3 թուականներուս) պէտք եղած հրահանգները և հրամանները ստացած է,— և ի Հնդկաստան երթալոյ նպատակին ոչ միայն միայն ի վանդի եղոյ Հնդկահայոց այցելոյ և օգնելոյ համար, այլ նաև անդ կարևոր դպրոցներ հաստատելոյ և այլ մի քանի ազգային հոգացողութիւնք և եկեղեցական կարգադրութիւններ տնօրինելոյ համար է, ինչպէս նաև Նոր-Ջուղայու Հայոց դպրոցաց համար եղած մի քանի կանոնները ի կարգի դնելով՝ ևս Հաւատ. Տ. Գաբրիէլ Եպիսկոպոս Նոպէլի Խոնդ-ին՝ Բրուս կոչուած և Ծպանաւ բողոքական քարոզչին խնամոյ անդիտութեամբ և միամտաբար յանձնած դպրոցը աղատելոյ և այլոց և այլոց պիտի ծառայէ, և Թեմին Առաջնորդ և Երքեպիսկոպոս լինելով՝ այս ամենի և այլ նպատակաց Հէջ անշուշտ աւելի պիտի յաջողի՝ և քան զայս արդիւնաւոր կլինի՝ և ինչպէս յարդ եղած փորձերէն այլ ևս տեսնուած է՝ թէ այլք հազիւ թէ պանդիտ կխորհին, — բայց և այնպէս իմաստասէր վերյիշեալ Վարդապետին գովելով նորա եռանդը և քանքը՝ արժան կհամարիմք հետևեալ ծաղկաքաղը ինչպէս նաև յայտարարութիւնը և ցուցակը Երեսք ամենայնի մէջ հրատարակել։

Հետևեալ ծաղկաքաղէն նաև բանիմաց մերաղնեայք կարող են նկատել, որ բողոքականք ժողովրդեան կրած տարաբաղտ և դառնագին վտանգից և ձախորդութեանց միջոցները յարմար առիթ դառնելով՝ տպագրութիւնը բոլորովին տարբեր ճամառով և խորամանկութեամբք մի տարբեր և չար նպատակի միջոց ըմբռնած՝ կըտքնին միամիտ ժողովուրդը խաբել և պատրել՝ զնոսա ի բողոքականութիւն և յաղդուրացութիւն հրապուրելով և գլորելով, այո չ բաբէպտչութիւն՝ բայց փոխարէնը պղծութիւն կինութեան, անկծութիւն կամ հաւատուրացութիւն կսերմանեն, եւն. եւն։ Ընդակառակ կպատուիրէ Տիեզերաց Փրկիչն Յիսուս Քրիստոս, այսպէս պիտի լինի Քրիստոնէութիւնն, այսպէս կուսուցանէ և կպահանջէ Առաքեալն և Ծաղրաւկրութիւն։ Բայց մեծ ուժ է ի ծովու խորասուզելոյ և խզդուելոյ վտանգի ներքև տադնապող անձի նմանութիւն ունեցող անձանց նեղ վիճակում խոստանալ կամ անել մի օգնութիւն, բայց միևնոյն ժամանակ չանալ՝ որ ազատելէդ զինի ընդ-

նան, կամ պապրիկեանն, և կամ վերջապէս պղծո-ւթիւն և հա-ապո-ւթիւն լինին։

Երդ աներկմիտ կ՚ուսանիմք որ, ինչպէս Երժ. Եպիսկոպոսն Վարդապետն և եկեղեցականք՝ նոյնպէս Պարսկաստանաբնակ և այլ տեղեաց մերազնեայք հետզհետէ քաջ կ՚հասկանան և կ՚ճանաչեն բողոքականաց և այլոց պատրուակեալ ջանքերը և նպատակները, և հնարաւոր միջոցներով և ըզգուշութեամբք ապարդիւն կ՚թողուն նոցա ջանքերը՝ միանգամայն կ՚հեռացնեն մարդակերպ գայլերը ի միջոյ ժողովրդեանն։

Ա՚հաւասիկ յիշեալ ծաղկաքաղն։

«Թղթ ընդրեմ ի Վեհափառական Օծելութենէ Ձերմէ խոնարհաբար ի բացայայտութիւն առաջի Գլխոյդ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ զՀանգամանաց աղետալեաց փորր Հօտիս Ձերում, որք ի վտանգս հոգևորս մերձեալ տեսանին, զՀօտին ասեմ Ջուղայաբնակ և Թէհրանաբնակ ևլն. Ազգայնոց մերոց, որոց՝ յետազարեան միջոցս ժամանակի յետ գաղթականութեանց իմերկաց մերձին Հայաստանի՝ ոչինչ սանանել կարացին մայրենի հաւատոյն և ուղղափառ սուրբ Կրօնիս, ոչ Պարսկական բազմապիսի մեքենայագործութիւնք, և մնահաւիթ առնչանք և գաւազրութիւնք, ոչ բռնութիւնք ուրացողաց, և ոչ դառապարտեալ վիճակ իւրեանց և այլ հարկեցուցիչ դէպք, քանզի այսոցիկ ամենայնի հաւբերատար ճգնութեամբ տարեալ՝ անարատ և ջերմեռանդ կացին մնացին յանբիծ և ուղղափառ հաւատս քրիստոնէութեան, զոր ուսուցանէ Հայաստանեայցս Առաքելական սուրբ Եկեղեցի, ընկալեալ ի Սրբազանից Առաքելոցն մերոց ի Թադէոսէ և ի Բարդուղիմէայ, և ի բազմաջարչար Հօրէն սրբոյն Գրիգորէ Լուսաւորչացն Եկեղեցւոյս, և յայլոց երանաշնորհ Հարցն։

Երդ՝ նախասկիզբն չարիաց սատանայ տեսանելով թէ յայսքան միջոցս անզօր Հանդիսանան բիւրապիսի խարէութիւնք իւր և գժոխային եղեւնագործ չարութիւնք ի յաղթահարել սուրբ փորր Հօտիս, և տակաւին անվհատ արձանանայ ի հայրենի սուրբ Կրօնի Եկեղեցւոյ իւրոյ, զայլ ևս ամենաչար հնարս ի մէջ առ, որպէս զի պատրուակաւ քրիստոնէութեան յորոգայթ իւր արկցէ, որպէս ի սկզբանէ հաստատութեան ընդհանուր Քրիստոսական Եկեղեցւոյ ի ձեռն անօրէն հերձուածողաց և հերետիկոսաց բազում միջոցօք փորձ փորձեաց զրգռեցուցանել զայն ի սուրբ Հաւատոյ, և նոքօք բազմատանջ ալեկոծեալ ծըփեցաւ Եկեղեցին, այլ նաւապետն Յիսուս զերծ և անվտանգ պահեաց զնա ի սատանայական ծըփանացն. այսպիսի հնարս և չարն այն հնարեաց վասն փորու Հօտիս, զի այն ինչ յաջողեալ զգայուստ նորաղանդ բողոքական քարոզչաց անտ, որք մեզս գործեալ ի վիճակս՝ խարեպատիր հնարիւք չանան քեցել զորդիս ի գրկաց Մօրս մերոյ Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ և թակարդել զնոսա ի մոլար վարդապետութիւն իւրեանց և յաղանդ կրօնին Լուտերականութեան և Կալվինականութեան. քանզի թէ աստ ի Նոր Ջուղայ, թէ ի Թէհրան, և թէ ի Համադան բազմացեալ նոցա՝ չանան խաբել զպարզամիտս կամ զչքաւորս, տալով զդրամական օգնութիւնս և իբր ողորմելով տառապելութեան նոցա, որով և որսան ի հաղբս իւրեանց, և այսպէս կուտեալ ի ժողովարանս ուսուցանեն նոցա զմոլորամիտ վարդապետութիւնս հակառակ սուրբ Կրօնի մերում. և ոչ այսու շատացեալ՝ այլ և բանան վարժատուներս, և զանմեղ մանկունս Աղգիս մանաւանդ աղքատաց, մուծանեն անդր, և հոգալով զպէտս ապրուստի նոցա, ուսուցանեն նոցա ոչ թէ գլեզուագիտութիւնս կամ զպիտանի ուսմունս, այլ զաղանդ իւրեանց, թէև երևութապէս ցուցանեն ծնողաց նոցա իբր թէ ուսումն պարգևեն։

Աստ ի Ջուղա մի ի նոցանէ Բրուս կոչեցեալ քարոզիչ բողոքականութեան ի 1870 թուին սկսեալ, ի ժամանակս սաստիկ սովուն մեծաքանակ դումարս ըներեալ թէ յընկերութենէ իւրեանց և թէ Եվերոպացւոց բաժաներ աստ աղքատաց, և զայս ողորմութիւն և գործ՝ զոր առնէր զամենայն՝ նպատակաւ իւրացուցանելոյ զժողովուրդս տեղւոյս, որպէս և բացեալ է աստ Դպրոց մի, յորս զումարս մեծ ծախելով և վար-

ձեռով զվարժապետս Անգղիերէնագէտս, Պարսիացիս ևն. ուսուցանէ նոցա առաւել զկրօն իւր՝ թէև ծնողք նոցա՝ այս ինքն մանկանց՝ կարծեն թէ զԱնգղիերէն ևն. լեզուս վարժեցուցանեն, զի բազումք այն են, որ յեռանդն ուսումնասիրութեան բորբոքեալ՝ տան ևս անդանօր ղղաւակունս ի յուսումն վարժից և լեզուագիտութեան. ի Պարոցս այս մինչ ցարդ ուսուցեալ են Հայ ուսուցիչք ողջամիտք զքրիստոնէականութիւնս Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ, բայց ի նորոյ լսեմք թէ՝ նոյն արբանեակք բողոքականութեան խստիւ արգելեալ են չվարժել զնոսա նոյն քրիստոնէականութեամբ, այլ իւրեանց վարդապետութեամբ. Ես սէք, Վ. Հայաւուր Տէր, թէ որպէս ողորմելի է վիճակ Զուղայու, և յոր աստիճան հոգևոր տրտմութեան համակեալ սիրտք ճշմարիտ աղգասիրաց, և մանաւանդ Կղերոյս հոգևորականաց, զի ի մի կուսէ դատարկաձեռնութիւն ամենեցուն կաշկանդեալ կապէ զձեռս դրամական նպաստիւք յօգն հասանել աղետից, որով թշնամին հաւատոյս զործէ զամենայն գործս զայս, և զթոյն դառնութեան իւրոյ համաճարակ տարածանէ, և ի միւս կուսէ՝ զի տեսանեմք այսպէս օր ըստ օրէ խլել ի ծոցոյ սուրբ Եկեղեցւոյս զՀարազատ որդիս նորա, և ի գայթ աղանգաւորութեան իւրեանց տրմալաքաւ շաղախեալ զպարզամիտս և զանմեղ մանկունս. Բրուսն այն միջոցօք ինչ յառաջ գնացեալ է յԵւրոպա, և որպէս լսեմք վասն հանգանակելոյ անտի ևս մեծ գումարս, զի նովաւ վերադարձեալ ևս առաւել զնորամանկ հնարագիտութիւն իւր ի գործ դիցէ, և մեծամեծս գործեսցէ, և որպէս ունի մտադրութիւն մինչ անգամ հնարել, զի վերացի աստի Հայութիւն և Եկեղեցի մեր, վասն որոյ աղաչեմք զերեսս Վ. Հայաւուր Օծելութեան Ձերոյ, յետ տեղեկանալոյ Ձեր թէ գրովս և թէ խնդրագրով Հասարակութեան տեղւոյս՝ որպէս և անշուշտ Գերապատիւ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Առաջնորդն մեր ևս տուեալ իցէ ծանուցս զայսցանէ, առնել բարեհաճեսջիք փութով զկարևոր տնօրէնութիւն ինչ վասն այսր, զի մի՛ ի գառնան նորա աստ՝ ևս առաւել հոգևոր վնաս նորա տարածեսցի ի ժողովրդականս տեղւոյս, որպէս և Համազանգուածական Հայք միանգամայն որս եղեալ են այնպիսեաց, զորմէ քահանայք տեղւոյն գրեալ էին, և խնդրեալ էին առաքել աստի վարժապետս, զի բացեալ ինքեանք ևս վարժատունս կրթեսցեն զմանկունս և չթողուցուն նոցա յաճախել ի դպրոցս բողոքականաց.

Այո, Վ. Հայաւուր Տէր, այս է միակ հնար ղիմադրութեան նոցա, վարժարանաք միայն կարեմք խափանել զյառաջխաղացութիւն նոցա, և այն պարտի լինել օրինաւոր և բաւականին գումարօք. Ցայս եռանդն վառեալ և մեր՝ ի 15 Յունվար ի 1875 թիւ Ցայտարարականաւ մերով յայտնեցաք Հասարակութեան տեղւոյս, զնոստումն մեր 4200 կոռուպիեաց գումարս նուիրել ի մէնջ ի Հաստատութիւն Ազգային Ուսումնարանի միոյ աստ ի Զուղա, և հետևապէս կտակաւ ևս թողուլ նոյն ուսումնարանին զամենայն այլ գոյս և ստացուածս մեր, որպէս և յանձն առաք Հանգանակել յԱզգայնոց տեղւոյս և Հնդկաստանի՝ զինքնակամ նուէրս յանուն նոյն ուսումնարանին. Ձայս խոստումն մեր կատարեցաք յիտոյ, զի զնոյն 4200 կո. ռուպիսն՝ որ լինի Պարսից զրանս 10080, յանձնեցաք Հոգաբարձուաց յիշեալ առաջադրեալ ուսումնարանին, առաքել ի Կալկաթա և ապահովել ի ներքոյ գրամադլխոց Անգղիոյ Տէրութեան, զի տոկոսքն եկեսցէ ամ ըստ ամէ ի ծախս նոյն ուսումնարանին, հանգանակեցաք ի Զուղայեցւոց ևս զգումարն իրը 4000 Պարսից զրանեաց, զորս և նմանապէս յանձնեցաք նոյն Հոգաբարձութեան առաքել ևս ի Կալկաթա և ապահովել, և այն ինչ մինչ պատրաստէաք յուղի անկանել առ ի Հընդկիս ի ժողովարարութիւն նուիրեաց Հրամանաւ Գերապատիւ Գրիգորիս Արքեպիսկոպոս Առաջնորդիս, և ահա եհաս բարձրագոյն Կոնդակ Վ. Հայաւուրութեան Ձերոյ և որով ուղևորեցաւ Նորին Գերապատուութիւնն ի Հնդիկս ի 21 Մայիսի անցեալ ամսոյ, և այսպէս մնաց նոյն գործ խափանեալ. Ուստի յայտնելով զայս ամենայն ի սպաս Սրբազնագոյն Տէրութեան Ձերոյ և համառօտիւ ցուցանելով զպատրաստեալ վտանգն՝ աղաչեմք օր մի յառաջ հոգալ զայնմանէ և զկարկառոր տնօրէնութիւն Ձեր առնել, զի մի՛ ժողովուրդ մեր մատնեսցին ի լարեալ ծուղակս Թշնամեաց և որս եղիցին խորամանկութեանց,

Ապաքէն են ատ մեզ և քանի Դպրոցք *) կառուցեալք ի Հայրենասիրաց Հնդկահայոց ոմանց, որպէս և Հանգանակեալ գումարն ընդ նուիրկոցն ի մենջ ծառայեն յայն պէտս, այլ Համեմատիլով ընդ ծախեալ գումարս բազդաբանաց ոչինչ լինին վասն որոյ պէտք են բաւականին դրամոց, զի միացեալ ընդ վերոյիշեալ գումարան՝ Հատուտեսցի օրինաւոր և Հատուտուն ուսումնարան բարձրագոյն ուսմանց և լեզուագիտութեանց ի գիմադրութիւն Թշնամեացն և այսր Հոգացողութեան սպասեմք ի Վեհիզ անօրինութենէ։

Ծրարեցաք ի սմին զմի օրինակ ի ցայտարարականէն մերմէ և զցուցակս Հանգանակեալ գումարաց յանուն նոյն առաջադրեալ Ազգային ուսումնարանին ի գիտութիւն Վեհափառութեան Ձերոյ, զոր ապա խնդրեմք յանձնել Խմբագրութեան Արարատ պատուական Ամնագրոյ սրբոյ էջմիածնի՝ և հրամայել նոցա հրատարակել յէջս այնր Ամնագրոյ ի տեղեկութիւն Ազգայնոց և իքայլակրութիւն նուիրողաց այնց գումարաց, զոհ լինիցուք։

Յայտարարութիւնը և ցուցակը իւրաքանչիւր թերթն կհրատարակեմք։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՅՐՑԵՑԵԼ ՄԱՍԻՆ ՀԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ.

(Շարունակութիւն)։

ՅԿԱՏԵՐԻՆՈՎԱՆ.

Ձեռամբ Գէորգ քահանայի Մէլիքեանց	ր. կ
Ժողովեցաւ ի շրջակայից քաղաքին	100
Ցարութիւն Ա. քահանայ Վարդանեանց	5
Մինաս Ա. քահանայ Բաբիեանց	3
Գէորգ քահանայ Մէլիքեանց	3
Սրապիոն Ա. Սարկաւագ Պռոտոփոպեանց.	2
Ուսուցիչ Պ. Նիկողայոսեան Գալֆայեանց	2
Գէորգ Արզումանեանց.	15
Մինաս Մկրտչեան Քափիքեանց	20
Աւետիք Իլանգիլեանց	15
Լուսպարոն Խլըպիկեանց	10
Նիկողայոս Շապովալեանց	5
Սարգիս Ձախալեանց	3
Ղազարոս Պէգէլեանց	5
Մանուկ Սէթպաքեանց	15
Խաչերես Խաչիկեանց	2
Խոս Ուզունեանց	2
Ցարութիւն Պալաթսուքեանց	2
Բազդասարեանց և Թառաւեանց	5
Գասպար Մինասեանց	1
Սարգիս Գասպարեանց	1
Եղբայր Պալաթսուքեանք	10
Գաբրիէլ Թորոսեանց	5
Նիկողայոս Թամազեանց	10
Մկրտչէ Եավաշեանց	3
Фёдоръ Алексѣичъ Лотшниковъ	1
Խաչատուր Խարաբիլեանց	15
Գէորգ Ռափայէլեան Պաշմաքեանց	1
Օգաննես Պախչիսարայեանց	3
Յակովբ Նիժանաճեանց	3
Գաբրիէլ Պօղոսեանց	3
Գէորգ Խոջեանց	5
Կարապետ Օրֆիեանց	3
Գասպար Ոսկերչեանց	1
Պետրոս Եւանգուլեանց	20

(ի յետոյ)

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԽԱԶՆԱՏԱՐԵԱՆՑ ԵՒ Տ. ՀՌԻՓՍԻՄԷ Ց. ԽԱԼԻՊԵԱՆ

Ի ՉԱԼԹԸՐ.

Խմբագրօրեան Ընթրաց Ընտրեցոյ.

Տարակոյս չկայ, որ ոչ սակաւ խնդութիւն պիտի պատճառէ Համազգեաց սրտից հետևեալ բարեգործութիւնը Հին—Նո-

*) Յաւելի է սը՝ նոյն դպրոցները միացնելով՝ մի նշանաւոր դպրոց դարձնել եւ աւելի նշանաւոր եւ ըստ առարկայից ճոխ ուսումնարան կազմել, աւելի օգտաւէտ լինելով, սակայն բարերաց միաբանութիւնն չէ յաջողած եւ ցարդ աւերն եւս ցցուած վիճակի մէջ մնացած են։—Սոցա մէջ նշանաւոր տեղ ունի եւ կարող է առաւել արդիւնաւոր լինել Ծաղկի Խաչատնի հիմնած դպրոցն։

Կարծամբ որ Գեր. Ա. աջնորդն ի Հնդկաստան անձամբ կցանցողի մի համաձայնութիւն գործադրել եւ դպրոցները դնել երկու մասի վերաբերելով՝ բարեկարգութիւն մտցնել։ Ծ. Խ։

բիմցի Նախիջևանաբնակ Պ. Սահիանոս Խազնադարեանցի և իւր ամուսնոյ տիկին Հռիփսիմեայ, զոր և ես մեծաւ ուրախութեամբ սրտի փութամ հաղորդել ամենայն ընթերցողաց։

Գիւղս Հոգևոր Օրհական դպրոցը 1867 ամի հետէ՝ այս կնքէն յօրէ բացմանն պաշտելի հովանաւոր Աղգասէր և ուսումնասէր Հայրապետի մերոյ Սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ Տ. Տ. Գէորգայ Դ-ի շարունակելով ցայսօր անվթար մատակարարել ուսումնական զմաւորական և զբաղմական կրթութիւն և վճռահանգոյս Ընտուաճապաշտութեան ըստ ամենայնի համաձայն բարենպատակ ուղղութեան Սուրբ կամաց Նորին Ամենաընտիր Վեհափառութեան՝ ցանկալի լինի և զգալի միանգամայն հարկ տեսանելով ընդարձակել դպրոցի շինուածքը ըստ պահանջման թուոյ և պիտոյից աշակերտացն։ Այլ քանզի առաջադրեալ դպրոցի շինուածքը ոչ սակաւ դրամական գումարի պէտք ունէր, վասն որոյ և զառաջինն վճռեալ ինչ թուեցաւ մեզ դէթ առ սակաւիկ մի, բայց որովհետև վերնայնում Տեսչութեան ամենակարող աջակցութիւնը միշտ և հանապազ զուգընթաց է այսպիսի աստուածահաճոյ ննթադատութեանց և ձեռնարկութեանց, իրրև ուղիղ և առաջնորդ, ուստի ոչ իճահ դայր վճռեցին, որպէս և եղևն իսկ։ Ըստ որում իմիք այսր յիշատակեալ Սրբազնոյ Պ. Սահիանոս Խազնադարեանց գովելի լինի հոգևսիրութեամբ իւր բարեջան տիկին Հռիփսիմէ Յարութիւնեան Խալեպեան ամուսնովը հանդերձ՝ ամենաջերմեռանդ կերպով ջնջուցին այս պիտոյքը, այն է նուիրեցին միանգամայն ի սեփհականութիւն Եկեղեցւոյ և յօգուտ նորոգ կառուցանելի դպրոցին մերոյ ընդարձակագիր տեղ մը գիւղիս մէջ, որով թեթևաբեռնեցին նոքա գիւղիս հասարակութեան ջանալուս հոգացողութիւնը այս մասին։

Այս երկոքին սիրակցորդ զոյգս աճելով բարգաւաճելով լինելով ազգի ազգի առաքինազարդ բարեգործութեամբ, ապաքէն և իրաւամբք և արդեամբք արժանացեալ թէ հանդգի և թէ օտարաց լինելոյն շնորհակալութեան և սիրալիր համակրութեան, — երբէք չեն ղադրեր և արդ չդադրին մխիթարել և սփովել զչքաւորս և զկարօտեալս՝ յարաժամ առիթս որոնելով և յօժարամիտ դանձինս իւրեանց առ այդ ընծայելով, ինչպէս օրինակ լինի, սոքա բաց ի յիշեալ ընծայիցն՝ ամենայն սիրով յանձնառու եղեն իւրեանց սեպհական նուիրեամբը հոգալ դպրոցիս մէկ քանի չքաւոր աշակերտաց պիտոյքը թէ գրենիօք և թէ հանդերձեղենօք։— Նոյնպէս սոքա նուիրած են միանգամայն հոգևսիրութիւն և ի պետս՝ իւրեանց անշարժ կայքը գիւղիս մէջ և անոնց եկամուտքը զինի մահուան իւրեանց։ Ան սոցա և այլ տեսակ բարեգործութիւնք, զորս մանրամասնեմ լեալ խղճի առնելն ամաչեմ՝ թողում այլուստ առնել բարեպատեհ նուագի։ Վասն այժմ աւարտ տալով համառօտագիծ նամակիս՝ խոնարհաբար խնդրեմ խմբագրութիւնէդ, մի՛ բացասել տեղի տալ այս նամակիս իմում յանկանց լուսաշաւիղ ամսագրոյդ Ընթերցողաց յուրախութիւն բարե-

Նախանձ սրտից՝ և իդիմաց պիւղես շնորհակալութեան առ Արճապատիւ Նուիրատուս Արճ. Պ. Սահիանոս Խաչնաւարեանց և Հոդևսէր և Համեստափայլ ամուսին նորա սիկին Հռիփսիմէ Յարութիւնեան Խալիպեան, որոց և ես գոհացան սրտիւ և լիաբերան օրհնութեամբ մաղթեմ ԻՏեառնէ և ի Փրկչէն մերմէ ՅԱստուծոյ կեանս երկար և բարեբաստիկս ունել աստ յօգուտ և խրախճանութիւն Եկեղեցւոյս և ազգիս, և իհանդերձելոցն վայելել լեռվին զլուսաբէնն այսօրիկ ամենից առաքեալներէն։

Հոգաբարձու և կրօնաւոր

Մելքոն քահ. ՏԵ. ԲԱՂՏԱՍԱՐԵԱՆՑ.

Ի 29-ն Յունիսի 1875 ամի,
ի Զմիւռնիա Նոր-Նախիջեւանի։

Այս քարեպատեհ առթիւ Ընթերցողս խմբագրութիւն եւս գովելով յիշեալ քարեպաշտ նուիրատուաց բարի նպատակը եւ առաքելագործութիւնքը՝ հրապարակաւ շնորհակալութիւն կայտնէ առ նոսա։

Շատոնց են եւ ապրին միշտ այսպիսի առաքինի եւ բարեգործ Հայեր՝ որք անմահական կոթող եւ յիշատակներով մշտնջենական ժառանգներ եւ օրհնաբաններ կթողուն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Ազգի մէջ։

ԲՆԻՆԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
Ի ԳԱՆԼԻՃԱ ԳԵՂՋ ՇԻՐԱԿԱՑ.

Խմբագրութեան Ընթերց. ամսագրոյ.

Ըստ որում խմբագրութեանդ բարենպատակ ստացուածքն է և յատկանշին՝ իւրաքանչիւր մի ամնատերն Արարատոյ զարդարել ուշադրութեան



արժանի նորանոր նշանաւոր յօդուածներով ի բարոյական զարգացումն մեզ ընթերցողաց Արարատայ, և զի՝ արդէն Տպարանն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ունի պատրաստի բևեռաձև գըրոց ձուլածոյ տառերն, որովք քանիցս իմ աշխատութեամբ զանազան տեղերից գտած և արտագրած՝ նոյնպիսի գրովք արձանագրութիւնքը տպագրուած են, ուստի փութամ յանձնել խըմբագրութեանդ՝ յօդուածոյս հետ միասին զօրինակըն հինգ տող բևեռաձև արձանագրութեան՝ զբևեռաձն իմ վերայ քարաժայռին եղելոյ ինձերքոյ ամրացանձ աւերակաց՝ որ մերձ իվերին Ղանլիճայ գիւղ Շիրակայ, և ինդրեմ Արարատայ էջերի մէջ զետեղել ի հետաքրքրութիւն հնասիրաց և հնագիտաց։

Այս առիթիս յատուկ շնորհակալութիւն կըյայտնեմ Աղէքսանդրապօլցի Բարեկրօն Յովսէփ Աւագքահանայի Կոստանդեանց և Պ. Աւետիքի Եղնկեանց, որք ներկայ արձանագրութիւնը ձեռք բերելոյ համար օժանդակեցին ինձ։

ՄԵՍՐՈՎԲ ԳՈՒՄԱՇԵԱՆՑ.

3 30 Յունիսի 1875 ամի

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

ՅԱՒԱՏԱՑԱԿԱՆ.

Ո՛և իցէ գործոյ գովեստ և կամ պարսաւ տալը ամենայն մարդոյ գործն է, բայց թէ շատ քիչ կպատահի՝ որ ճշմարիտ բարին իւր բարի նպատակներով գովութեան արժանի լինի, և չարն էլ իւր չար պարագաներովն անարգանաց ենթարկուի. ուստի այս կէտիս իմ գովեստը Հանդիպ շընորհակալութեամբ ոչ որին չէ վերաբերում, եթէ ոչ Աղէքսանդրապօլեցի Պ. Մարտիրոս Շիմաղ ձեռնին։

Վասն զի Սիշեալ Պարոնը երբ Ախալցխայ քաղաք եկաւ, և ի վաղուց հետէ Պարոնյ քաղաքին մէջ եղած ժամանակին անգամ լսելով Վարդանեան Ուսումնարանի բարի համբաւը և նորա աշակերտաց յառաջադէմ զարգացումները, ուզեց ի սոյն ամի անցեալ Յուլիսի 28 ին, տեղւոյս Սիշեալ Ս. Վարպետի դպրոցին այցելութեան եկաւ և աշակերտաց յառաջադէմ զարգացած և աշխոյժ պատասխանատուութեանց արդիւնքներէն գրաւուելով Պ. Շիմաղեանցն ինպատ ազգասիրական մանկանց ընծայից չորս րուբլի արծաթ, որ Սիշեալ գումարով Հոգաբարձութիւնը կարողանայ հոգս քաշելով բերել տալ աշակերտաց դասուց վերաբերեալ գրեանք։

Ահա այսպիսի բարեսիրութեամբ Պատուարժան Պարոնը ուրախացրեց անմեղիկ մանկանց սրտերը ցոյց տալով իւր բարեպաշտական ջերմ զգացողութիւնը։

Ուստի և մեք գոհ սրտով Վարդանեան դպրոցի աշակերտաց կողմանէ շնորհակալութիւններս կըյայտնեմք հրապարակաւ, ընդելով իւր տրոցը այլ տուղդի ազնիւ սրտին։

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՍԻՄԱԿԵԱՆՑ.

Ի 4 Օգոստոսի 1875 ամի

ՅԱԽԱԼՑԽԱՅ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻԲԼԱՆԴԱՆ.

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱՑ ԽԱՐԴԱԽՈՒԹԵԱՆՑ ՄԻ ՊԱՏԿԵՐ ԵՒՍ.

Հետեւեալը Լոյս Հանդիսի Բ. շրջանի Ա. թուոյն մէջ հրատարակուած է, յորում բողոքական Հայոց եւ քարոզչացն մի հակասական եւ սխալ համոզման պարզ պատկերն եւս կտեսնուի, յորում կատարեալ խոչտանգուին իւր խակական նշանակութեամբ դարձեալ կրկայլի սիւսիօնարաց վերայ։

‘‘Ազգի մէջ բողոքական անուանք իրենց բողոքականութեանը համար չեն ստանալ ըն անուն, ոչ ալ նուազ կը սիրեն իրենց անուն ազգը, կամ նուազ կը պարծին իրենց ազգային պատմութեամբը. արդարեւ անոնք պիտի չկամենային անուանել Հայաստանեայց Եկեղեցին, ոչ ալ զատ քաղաք

քական մարմին մը պիտի ըլլային, եթէ կրօնական ապաշխարութեան շնորհաց ընծաներ անոնց,,։

Աւետաբեր

Ստոյգ է Հայերն իրենք չէին մոռնար իրենց Հայաբնակութիւն, և չպիտի ուրանային իրենց մայրենի Եկեղեցին՝ եթէ միսիոնարք անոնց հետ խղճի ազատութեան հակառակ չվարուէին, և եթէ սը-նոտի շահու յոյսեր նոցա հոգւոյն առջև չդնէին և արդարև անոնք չպիտի բաժնուէին Հայաստա-նեայց Եկեղեցիէն՝ եթէ միսիոնարք կարենային պղտուտիք իրենց հացն ու թօշակը ճարել . . . Ո՞չ ապաքէն Հայ ժողովուրդն է իրենց ապրուստի միջոցն և այս չէ՞ իւր կրօնական ազատութիւն կոչած՝ որ մենք կխմնանք հաց ու բարձ (իշխա-նութիւն) միսիոնարական խումբին։

,,Աւետարանական Հայք գիտեն թէ իրենց ապրիլը պապա-ական է, սակայն գիտեն նաև թէ ճշմարտութիւնը, և իրենց հոգ-ւոյն փրկութիւնը՝ որ այն ճշմարտու-թիւնը ընդունելէ կախում ունի՝ աւելի պատուական է,,։

Նոյն

Միայն աւետարանական Հայք չէ, այլ բոլոր աշխարհ և դու իսկ խղճովդ կվճռեսես հղբայր Աւետաբեր ,,որ Հայք Ազգ են ընտիր, Թագա-ւորութիւն, Քահանայութիւն, Ազգ սուրբ, ժո-ղովուրդ սեպհական,, *)։ իսկ այդ քարոզած ճըշ-մարտութիւնդ մեզ կթուի՝ թէ նոր բլլալու է, ո-րովհետև Հայ ժողովուրդն՝ 19 դարէ ի վեր այն երկնից միակ ճշմարտութեան հաւատաց և կըն-դհանայ անխոտոր այն արդարութեան ճանապար-հէն՝ որ ինք Աստուածորդին ասաց ,,Ես իսկ եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք,, Ձեր քարոզած՝ որ ճշմարտութիւնն է. աշխարհի մէջ 19 դար յառաջն երևեցաւ մեր քարոզած ճշմար-տութիւնն՝ որ խեղճուկ ազանակի մը վերայ յե-ցած հրևեցաւ Սաղիմայ մէջ և ի Գողգոթայ մեռաւ ի խաչին. մի գուցէ՞ ճշմարտութիւն բաժնելդ դար-ձեալ միսիոնարացդ ապրուստն է։

Լոյս

ՆՈՒԷՐ

Հետեւեալը ուրախութեամբ կարդա-ցինք փո-ի լրագրոյ մէջ։

Մեր բարեբաստիկ ազգայիններէն Թաւրտապու-րունեան մեծապատիւ Աթթաղան էֆէնտի՝ որոմ բաժին հանեց բաղդը Ռումելիի վերջին վիճակա-կանութեան առաջին պարգևն *) — բարեհաճեր է գրով ծանուցանել Հիւանդանոցի մեծարգոյ Հո-գաբարձութեան, թէ որոշած է 300 լիրա նուիրել ի նպաստ Հիւանդանոցի։

Գոհութեամբ կտեսնենք, որ Աթթաղան էֆէնտի բաղդին այս ձոխ բարիքը վայելել սկսած ատեն աղքին աղքատն ու տնանկը կըլլիշ անմիջապէս։

Աներկիւղ եմք, թէ ուրիշ այսպիսի երկնահա-ճոյ բարեգործութիւններ ալ կընէ՝ գիտելով միշտ իւր բաղդն յօդուտ ի կիր արկանել իմաստուն տնտեսութեամբ։

(*) Ա. պետ. Ր. 9։

(*) 600000 (վեց հարիւր հազար) ֆրանք։